



ԱՐՄԵՆԻԱՆ Հանրապետության Ռազմական ծրագիր

Քրամական և Ռեստավրացիա ծրագրեր



Տարեկան
Հաշվետվություն
2008



Տարեկան
Հաշվետվություն
2008

Բովանդակություն

4	ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵՌՔԵՐՈՒՄՆԵՐԸ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ
7	ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՒՂԵՐՁԸ
8	ԲԱՆԿԻ ԳՈՐԾՍԴԻՐ ՏՆՈՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ
9	ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԵՋԱԿԱԶՄԸ
10	ԳԼԽԱՍՍԱՅԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆՈՐ ՇԵՆՔԸ
14	ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ
16	ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ինչպես դատմալ ԱՐՄԱՎԻՍԲԱՆԿ-ի հաճախորդ Վճարահաշվարկային ծառայություններ Ավանդներ
17	ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ
18	ՖԱԿՏՈՐԻՆԳ
19	ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Դիլերային գործունեություն Բրոքերային գործունեություն Կորպորատիվ պարտաստուների բողարկումներ
23	ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
24	ԱՆՁԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 2008
27	ՈՒՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
28	ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ
29	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ
33	Ֆինանսական հաշվետվորյուններ և անկախ առողջուրի եզրակացություն Արմավիսբանկ Փակ Բաժմետիրական Ընկերություն 31 դեկտեմբերի 2008թ.
36	Անկախ առողջուրի եզրակացություն
37	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվորյուն
38	Հաշվապահական հաշվեկշիռ
39	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվորյուն
40	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվորյուն
41	Ընդհանուր տեղեկատվություն

ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԶԵՌՔՔԵՐՈՒՄՆԵՐԸ 2008 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հումքար

«ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն անդամակցել է FCI (Factors Chain International) առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների միջազգային ցանցին: Կազմակերպվել է «ՎԱԼԼԵՏՏՍ» ՍՊԸ-ի երկրորդ թողարկման պարտատոմսերի տեղաբաշխումը՝ 500 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և Էկոնոմիկայի նախարարության կողմից «ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն վերընտրվել է որպես ՀՀ պետական (գանձապետական) միջին ժամկետայնության և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային շուկայի գործակալ:

Մարտ

ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (USAID) Ֆինանսական ոլորտի զարգացման ծրագրի (FSDP) կողմից «ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում իրականացվել են ոխակերի կառավարման համակարգի գնահատման աշխատանքներ:

Հունիս

Ներդրվել է Ֆաքս-բենքին համակարգը: Նախնական փորձարկման է դրվել «Հաճախորդների հետ հարաբերությունների կառավարման» ծրագրային համակարգը (CRM):

Հուլիս

Իրականացվել է «ՀայԱ-ուսգազարդ» ՓԲԸ-ի՝ 2-րդ թողարկման պարտատոմսերի տեղաբաշխումը՝ 1 մլրդ. ՀՀ դրամ ծավալով:

Օգոստոս

Իրականացվել է «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ի պարտատոմսերի տեղաբաշխումը՝ 150 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով:

Սեպտեմբեր


Իրականացվել է «ՎԱԼԼԵՏՏՍ» ՍՊԸ-ի՝ 3-րդ թողարկման պարտատոմսերի տեղաբաշխումը՝ 500 մլն ՀՀ դրամ ընդհանուր ծավալով: Բանկն իրականացրել է առաջին միջազգային (արտահանման) ֆակտորինգի գործարքը:

Հոկտեմբեր

Բանկի կանոնադրական կայիտալլ համալրվել է 1,251 միլիարդ ՀՀ դրամով՝ կազմելով 5,001 միլիարդ ՀՀ դրամ: Մատուցվող ծառայությունների տեսականու ընդացնման և որակի բարեկարգման, հաշվետվողականության արդյունավետության բարձրացման, «Ճարդու սխալի» ոխակի նվազեցման նպատակով «ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն ձեռք է բերել “ՀԾ Բանկ 4.0” հաշվապահական հաշվառման և հաշվետվողականության նոր համակարգ:

Նոյեմբեր

Համագործակցության պայմանագիր է կնքվել USAID-ի կողմից ֆինանսավորվող Էներգաարդյունավետության նախագծերի առևտրայնացման ծրագրի հետ: Ծրագրի շրջանակներում Բանկը զարգացնելու է վարկային նոր գործիքներ, ինչը Բանկին թույլ կտա նույտը գործել և հզորացնել դիրքերը որոշ շուկաներում կամ թիզնես-ոլորտներում՝ իրականացնելով փոքր և միջին ձեռնարկությունների, մեծ արդյունաբերական ձեռնարկությունների միջնաժամկետ վարկավորում: Բանկում ներդրվել է նոր օպցիոն գործիքը:



● **Մեր տեսլականն է լինել Հայաստանի առաջատար ունիվերսալ քանկ, որը համատեղում է կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ քանկային ծառայությունների առավելությունները՝ նպաստելով իր հաճախորդների, գործընկերների և բաժնետերերի համար լավագույն արդյունքների ձևավորմանը:**

Մեր առաքելությունն է նպաստել մեր կորպորատիվ և անհատ հաճախորդների բարգավաճմանը՝ մատուցելով միջազգային քանկային պրակտիկայում ընդունված և նրանց պահանջներին համապատասխանող բարձրակարգ ֆինանսական լուծումներ:

- **Մեր բիզնես - փիլիսոփայության հիմնարար արժեքներն են.**
- **Հաճախորդի կարևորում**
- **Պրոֆեսիոնալիզմ**
- **Ծրջահայացություն**
- **Գործընկերություն**
- **Կոնֆիդենցիալիզմ**
- **Շիտակություն**

ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՈՒՂԵՐՁԸ



Հարգելի տիկնայք և պարոնայք

2008 թվականը որակապես նոր մարտահրավերների տարի էր «ԱՐՍՍՎԻՍԹԱՎՆԿ» ՓԲԸ-ի համար: Արևոյան զարգացած երկրներում դեռ մոտ երկու տարի առաջ սկիզբ առած ֆինանսատեսական ճգնաժամը ընդլայնում էր իր աշխարհագրական ընդգրկվածությունը, և Հայաստանի տնտեսության ուղղված ճգնաժամի սպառնալիքներն ավելի ու ավելի հավանական էին դառնում: Չնայած այս ոչ այնքան լավատեսական սպառնալիքներին, հայկական ֆինանսական շուկան շարունակում էր պահպանել իր դիմամիկ զարգացման միտում՝ թեև ավելի նվազ տեմպերով: Ընթանում էին բանկերի խոշորացման գործընթացներ կապիտալի ավելացման, ինչպես նաև խոշոր ինստիտուցիոնալ միավորումների կողմից հայաստանյան ֆինանսական շուկայում բաժնետոմսերի ձեռքբերման շնորհիվ: 2008 թվականի վերջերին առավել բացահայտ էին դառնում ֆինանսական կենսունակության ապահովման խնդիրները բանկային համակարգում:

Մենք ընդհանուր տնտեսական անբարենպաստ պայմաններով պայմանավորված իհմնանական ֆինանսական ցուցանիշները նվազել են 2007 թվականի համեմատությամբ՝ ԱՐՍՍՎԻՍԹԱՎՆԿ-ը չի շեղվել իր ուսումնավարական ծրագրերից: Բանկը կարևորում է նաև Սիջազգային ֆինանսական հաստատությունների հետ համագործակցության ուղղությամբ աշխատանքների իրականացումը, ինչի արդյունքում ԱՐՍՍՎԻՍԹԱՎՆԿ-ը հնարավորություն կունենա ընդլայնել ֆինանսավորման ներգրավման աղյուրները և առաջարկվող ծառայությունների շրջանակը ու բարձրացնել մրցունակությունը ֆինանսական շուկայում: Իսկ 2008 թվականի տարեսկզբին՝ հունվար ամսին, Բանկը պաշտոնապես դարձավ Սիջազգային ֆակտորինգային ընկերությունների ցանցի (FCI) անդամ և առաջին հայկական բանկը, որն անդամակցում է նրանց, ինչը հեռանկարային զարգացման ուղիներ է բացում Բանկում ֆակտորինգային ծառայությունների զարգացման համար:

2009 թվականին Բանկի ջանքերն ուղղված են լինելու ճգնաժամային արդյունավետ կառավարմանը, ինչպես նաև մարքեթինգային և զարգացման համապատասխան մարտավարության մշակմանը՝ շեղվելով դեռ հիմնադրման ժամանակ որդեգրած սկզբունքներից և գործունեության ուղղություններից: 2009 թվականին նախատեսված Բանկի տեղափոխումը նոր շենք կօգնի է ավելի կատարելագործել մասուցվող ծառայությունների տեսականին, բարելավել առկա ծառայությունների որակը, ներդնել փրայվիք բանկային ծառայություններ:

ԱՐՍՍՎԻՍԹԱՎՆԿ-ն անցել է զարգացման որակական նոր փուլի, որտեղ զարգացման կայուն իհմքերը պահպանելու համար գործի են դրվելու կուտակված փորձը, ձեռքբերած շուկայական դիրքը, հեղինակությունը և որակյալ անձնակազմը:

Ցանկանում եմ իմ վստահությունն ու շնորհակալությունը հայտնել ԱՐՍՍՎԻՍԹԱՎՆԿ-ի անձնակազմին իրենց նվիրված աշխատանքի համար:

Վարդան Սիրմաքես
Խորհրդի նախագահ

ԲԱՆԿԻ
ԳՈՐԾԱԴԻՔ
ՏՆՈՐԵՆԻ
ՈՒՂԵՐՁԸ



2008թ.-ը Բանկի համար եղել է մարտահրավերների և փորձությունների տարի: Բանկի գործունեության համար հիմնական արտաքին միջավայրը եղել է ոչ այնքան բարենպաստ, պայմանավորված մասնավորապես՝ՀՀ-ում տիրող քաղաքական իրադրության հետևանքով տնտեսական ակտիվության նվազմամբ, ինչպես նաև Բանկի գործունեության մեջ էական դեր ունեցող միջազգային ֆինանսական շուկաներում տիրող ճգնաժամային իրադրությամբ: Թեև վերջիններին հետևանքով Բանկը վճառներ չի կրել, այնուամենայնիվ եղել են շատացված եկանուտներ և նախատեսվածից ցածր ֆինանսական արդյունքներ: Ինչևէ Բանկը շարունակել է զարգանալ՝ ունենալով մի շարք էական ձեռքբերումներ:

2008թ.-ին Բանկն անդամակցել է Միջազգային առաջատար ֆակտորինգային ընկերությունների ցանցին (FCI), համագործակցության պայմանագիր է կնքել ԱԱՆ Միջազգային Զարգացման Գործակալության (IDA) կողմից ֆինանսավորվող Էներգաարդյունավետության Նախագծերի Առևտորյանացման Ծրագրի (ԵՆԱԾ) հետ, շարունակել է համագործակցությունը Գերմանահայկական հիմնադրամի «Վերականգնվող Էներգիայի զարգացում» վարկային ծրագրի հետ: Նախնական համաձայնություն է ձեռք բերվել՝ համագործակցել Վերակառուցման և զարգացման եկամուտական բանկի (EBRD) հետ 2 ծրագրերի շրջանակներում՝ «Փոքր և միջին ձեռնարկություններին վարկերի ֆինանսավորում» և «Առևտորի ֆինանսավորում»:

Ներդրվել են նոր գործիքներ, մասնավորապես՝ հաճախորդներին առաջարկվում են օտարերկրյա արժեքորերով ռեալ գործարքների, դրամի ու արտաքույրի օպջին և ֆյուչերային պայմանագրերի կնքման ծառայություններ, մարժինալ գործարքների կնքման հնարավորություն ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա արժեքորերով, ինչպես նաև ֆակտորինգի իրականացում միջազգային շուկաներում: Բանկը պահպանել է պետական պարտատոնների շուկայի Գործակալի կարգավիճակը և հանդիս է զայիս որպես իր հաճախորդների կողմից բողարքվող պարտատոնների մարդեմեյքեր: Բանկը նախատեսում է շարունակել իր ակտիվ գործունեությունը ներդրումային ոլորտում:

Սպասարկման դրակի քարելավման, ինչպես նաև ծառայությունների լայն տեսականու պարագայում աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման նպատակով 2008թ.-ին Բանկը փոխել է իր հաշվապահական ծրագրային փաթեթը՝ անցնելով ավելի կատարելագործված տարրերակի: Ծրագրի լրացուցիչ հնարավորություններ է ստեղծել ներդրումային, վարկային և հաճախորդների սպասարկման գործառնություններում ու ավելի արդյունավետ դարձրել աշխատանքի կազմակերպումը:

Մասնակի ծառայությունների տեսականին և ծավալներն ավելի կրնկարանվեն կապված Բանկի կողմից նոր, ավելի հարմարավետ պայմաններով շենք տեղափոխվելու հետ, ինչը հնարավորություն կտա հաճախորդներին առաջարկելու սպասարկման ավելի հարմարավետ և փրայիթ բենքինցի սկզբունքներին համապատասխանող պայմաններ:

Բանկը նախատեսում է նաև ընդլայնել իր գործընկերների հետ շրջանակը՝ շեշտադրելով միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունը:

Բանկի անձնակազմի անունից շնորհակալություն եմ հայտնում մեր Հաճախորդներին և Գործընկերներին՝ Բանկին ցուցաբերած վստահության և փոխահավետ համագործակցության համար:

Գևորգ Մաշանյան
Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն



ԲԱՆԿԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՆՁՆԱԿԱԶՄԸ

Մանվել Խաչիյան
Տեղեկատվական
տեխնոլոգիաների
դեպարտամենտի տնօրեն

Կոնստանտին Սարյան
Ներքին առողջական դեպավար

Մերգակ Բաղդասարյան
Հաշվասահման հաշվասահման և
հաշվանությունների
դեպարտամենտի տնօրեն-
գլխավոր հաշվապահ

Արտաշեն Սարտիրոսյան
Վարկավորման
դեպարտամենտի
տնօրեն

Կարեն Տորյան
Ներդրումային
դեպարտամենտի
տնօրեն




Գլոբալ Մովսիսյան
Ֆինանսական տնօրեն

Անի Սարգսյան
Ոխսկերի կառավարման
բաժնի պետ

Գևորգ Մաշանյան
Գործադիր տնօրեն
Տնօրինության նախագահ

Գևորգ Խաչատրյան
Հաճախորդների սպասարկման
դեպարտամենտի տնօրեն

**«ԱՐՄԱՎԻՒԹՈՒՆԿ» ՓԲԸ
ԳԼԽԱՍՏԱՑԻՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆՈՐ ՇԵՆՔԸ**



Հարգելի գործընկերներ

Ձեզ ենք ներկայացնում «ԱՐՄԱՎԻՒԹՈՒՆԿ» ՓԲԸ-ի գլխամասային գրասենյակի նոր շենքը, որը տեղակայված է ք. Երևան, Վազգեն Սարգսյան 10 հասցեում:

Սիրով սպասում ենք Ձեզ մեր նորաբաց շենքում և հուսով ենք, որ այնտեղ ստեղծված հարմարավետ պայմանները և ընդլայնված տեսականիով բանկային ծառայությունները էլ ավելի կնապաստեն մեր ջերմ և սերտ համագործակցությանը:



ՀԱճԱԽՈՐԴՆԵՐ
ԵՎ
ԳՈՐԾԵՆԿԵՐՆԵՐ

ARM SWISS BANK
Private & Investment Banking



ԱՐՄԱՆԻԱՆ
Պրոֆիլ ժ Ռեզարվներ Շեթով



ՀԱՇՎԵՏՎՈՐ ԵՎ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ



Հիմնադրման օրվանից մինչ օրս ԱՐՍՍՎԻՄԲԱՆԿ-ն առաջնորդվում է կայուն և միջազգային փորձով ամրապնդված արժեքներով: Արդեն չորս տարի է ինչ ԱՐՍՍՎԻՄԲԱՆԿ-ը պահպանում և կատարելագործում է այդ արժեքները՝ հաճախորդի կարևորում, պրոֆեսիոնալիզմ, շիտակություն, գործնկերություն, գրահայացություն, որոնք դեպի երկողմանի բարգավաճում ապահովող գործարար մշակույթի ծևավորման և ամրապնդման գրավական են: ԱՐՍՍՎԻՄԲԱՆԿ-ը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, շարունակում է գործունեություն ծավալել երեք հիմնական ուղղություններով և մասնագիտանալ միջազգայնորեն ընդունված կորպորատիվ, ներդրումային և փրայվիթ բանկային (corporate, investment և private banking) ծառայությունների մատուցման ոլորտում՝ իր առջև ունենալով Հայաստանում այդ ուղղությամբ առաջատար բանկ դառնալու տեսլականը:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի արդի այս յանաններում առավել քանի կարևորվում է հաճախորդների ներգրավման և պահպանման, կայուն հարաբերությունների ստեղծման և ամրապնդման խնդիրը, որի վրա բանկը շատ մեծ ուշադրություն է դարձնում և այդ ուղղությամբ մշակում ու իրականացնում է ժամանակի պահանջներին համապատասխան ծրագրեր և միջոցառումներ:


ԱՐՍՍՎԻՄԲԱՆԿ-ն առանձնանում է հաճախորդներին առաջարկվող իր պրոդուկտների լայն տեսականիով՝ սկսած ավանդական բանկային ծառայություններից (վճարահաշվարկային, վարկային ծառայություններ, դեպոզիտային ճկուն սխեմաներ, առևտրի ֆինանսավորում) մինչև ոչ ավանդական բանկային ծառայությունները (այլնուրանքային ֆինանսավորում, ֆորվարդ, սվոփ, օպցիոն, ֆակտորինգ, ֆինանսական խորհրդատվության մատուցում):

Առևտրի ֆինանսավորումը, ֆակտորինգային ծառայությունները, ինչպես նաև ապրանքային և ֆինանսական ֆյուչերսները հիմնականում ուղղված են արտահանման և ներմուծման ողբերում գործող հաճախորդներին՝ նպատակ ունենալով պահպանելու նրանց մրցունակությունը տեղական և միջազգային շուկաներում, ընձեռվու նոր շուկաներ գրավելու հնարավորություն: 2008թ.-ի հունվարին ԱՐՍՍՎԻՄԲԱՆԿ-ը դարձավ Factors Chain International (միջազգային ֆակտորինգային առողջացման), ինչը հնարավորություն տվեց ֆակտորինգային ծառայություններ մատուցել շուրջ 70 երկներում:

Ֆինանսավորման և ածանցյալ գործիքների միջոցով մեր հաճախորդներն առավել արդյունավետ կարող են իրականացնել իրենց ռիսկերի դիվերսիֆիկացումը, ինչպես նաև դրանական հոսքերի կառավարումը: Ժամանակակից շուկաների նորանոր մարտահրավերներին դիմացնավելու, ինչպես նաև ներդրումային նախագծեր մշակելու և իրագործելու համար ԱՐՍՍՎԻՄԲԱՆԿ-ն իր կորպորատիվ հաճախորդներին առաջարկում է արժեքրերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման ծառայություններ: Այդ ոլորտում 2008թ.-ին մեր գործնկեր-հաճախորդներ շարունակել են մնալ:

«ՎԱԼԵՏՏԱ» ՍՊԸ-ն (որը կատարել է իր երրորդ թողարկումը Բանկի միջոցով) և «Արմենիան Քափը Փրոգրամ» ՓԲԸ-ն, ինչպես նաև այդ ընթացքում նոր հաճախորդներ են դարձել «Հայռուսազարդ» ՓԲԸ-ն և «Էքսպրես Կրեդիտ ՈՒՎԿ» ՓԲԸ-ն:

Կորպորատիվ հաճախորդների կառուցվածքը ըստ գործունեության ոլորտի



ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ-ը, լինելով առաջատարներից ՀՀ պետական պարտատոմսերի շուկայում և հանդիսանալով ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի Գործակալ, իրականացնում է շուկա ստեղծողի (մարքեթ-մեյքեր) գործառություններ՝

նպաստելով արժեքորերի հայաստանյան շուկայի իրացվելիության բարձրացմանը: ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ-ը շարունակել է իր ակտիվ մասնակցությունը ՀՀ արժեքորերի շուկայի և ֆինանսական միջնորդության ոլորտի օրենսդրական դաշտի բարեփոխումներին վերաբերող նախաձեռնություններում: ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ-ն առանձնակի ուշադրություն է դարձնում ֆինանսական շուկաներում բանկերի և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների՝ վարկային կազմակերպությունների, ապահովագրական, բրոբերային ընկերությունների համար միջնորդ օղակ դառնալուն՝ մասուցելով նրանց ծառայությունները ինչպես ՀՀ, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում՝ հմարավորություն ընձեռելով ներդրումներ կատարելու տարրեր ֆինանսական գործիքներում: ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ-ն առաջարկում է համագործակցել իր հաճախորդների կողմից թողարկվող պարտատոմսերի տեղաբաշխման հարցում՝ հանդես գալով որպես տեղաբաշխման կազմակերպիչ կամ տեղաբաշխող խմբի անդամ: ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ-ն առաջարկում է անհատներին մատուցել փրայվիք բանկային ծառայություններ, որոնք ուղղված են այդ հաճախորդների ֆինանսական կարողությունների արդյունավետ կառավարմանն ու մեծացմանը: Այդ ուղղությամբ դեռևս շոշափելի հաջողությունների մասին վագ է խոսել, սակայն Բանկը հետևողականորեն քայլեր է իրականացնում նոր ծառայությունների ներդրման ուղղությամբ՝ հաշվի առնելով այդ սեզմենտում առկա աճի պոտենցիալը: ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ-ը ձևավորում է իր հաճախորդների հետ երկարաժամկետ կերպություններ, որոնց հիմքում ընկած են սերտ և փոխահական համագործակցությունը: Բանկի պրոֆեսիոնալ, հմտություն և փորձառու անձնակազմի օգնությամբ բացահայտվում և կանխատեսելի են դաշնության հաճախորդների կարիքները և ժամանակին տրվում են բարձրակարգ ֆինանսական լուծումներ: Բանկն իր հաճախորդներին

առաջարկում է անհատականացված (tailor-made) պրոդուկտների փաթեթ՝ արժեքորդերի անհատական, կոլեկտիվ և այլ տիպի պորտֆելների ձևավորում, բրոքերային և պահառուական ծառայություններ, ներդրումային գործառնությունների վերաբերյալ խորհրդատվորյան մատուցում: Ըկունությունը հաճախորդների հետ աշխատելիս կարևոր գործոն է Բանկի առաջանցիկ զարգացման ապահովման և «ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ» բրենդի առաջմղման գործում: Դրա վկայությունն է Բանկի հաճախորդների թվի ավելացումը նոտ 50%-ով 2007 թ.-ի համեմատությամբ:

ԱՌԱՋՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկն իր հաճախորդներին առաջարկում է ինչպես անհատական պահանջներին համապատասխանեցված ավանդական ծառայություններ, այնպես էլ ոչ ավանդական բանկային ծառայությունների լայն տեսականի:


- **Ինչպես դառնալ ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ-ի հաճախորդներին առաջին թայլի է Բանկի ծառայություններից օգտվելու հնարավորությունների ճանապարհին: Այն բույլ է տակիս ընտրել վճարման, ներդրման և ֆինանսավորման պահանջները բավարարող բազմաթիվ լուծումներ:**
Ելնելով Բանկում գործող հաճախորդների սպասարկման քաղաքականությունից և «Ճանաչիր հաճախորդիդ» (“Know Your Customer” rules) սկզբունքներից՝ Բանկը ծառայություններ է մատուցում միայն Բանկում հաշիվ ունեցող և Բանկի հաճախորդ հանդիսացող անձանց: Արտաքության և դրամային հաշիվների միջոցով Բանկի հաճախորդները կարող են իրականացնել վճարումներ և օգտվել

ներդրումային գործիքներից:

Վճարահաշվարկային ծառայություններ

Մասնակցությունը Հայաստանի միջքանկային համախառն էլեկտրոնային վճարումների համակարգին և գործընկերային հարաբերությունները միջազգային մի շարք հզոր ֆինանսական հաստատությունների հետ, ինչպիսիք են՝ UBS AG, Raiffeisen Zentralbank Österreich AG, Commerzbank AG, UniCreditBank, Promsvyazbank JSC հաստատությունները, բույլ են տակիս Բանկին՝ հաճախորդների դրամային և արտաքությային փոխանցումներն իրականացնել սեղմ ժամկետներում և նվազագույն ծախսերով: Նոր ծառայությունների մատուցմանը և հաճախորդների թվի աճին զուգընթաց 2008թ.-ին զգալիորեն աճել է ինչպես ՀՀ դրամով բոլոր պահանջների շրջանառությունը՝ կազմելով 336 մլրդ ՀՀ դրամ՝ 2007թ. 270 մլրդ-ի համեմատությամբ, աճելով 12.5%-ով, այնպես էլ արտաքույրով բոլոր պահանջների շրջանառությունը՝ կազմելով 225 մլրդ ՀՀ դրամ՝ 2007թ. 195.5 մլրդ ՀՀ դրամի համեմատությամբ աճելով 15%-ով:

2008թ. բոլոր պահանջների շրջանառությունը՝ 2007թ. համեմատությամբ (մլրդ. ՀՀ դրամ)



Օգտագործելով իր բղբակից բանկերի ցանցը՝
ԱՐՍՎՎԻՄԱԲԱՆԿ-ն իր հաճախորդներին և
գործընկերներին առաջարկում է տեղական
և միջազգային շուկաներում արտաքույթի
փոխանակման մրցունակ փոխարժեքներ՝
ցուցաբերելով անհատական
նոտեցում և փոխանակման օպերատիվություն:

Ավանդներ

Բանկն առաջարկում է հաճախորդների

ազատ միջոցների տեղաբաշխման
պահանջները բավարարող ներդրումներին լայն
հնարավորություններով ավանդային ծրագրեր,
որոնք թույլ են տալիս ստանալ երաշխավորված
եկամուտ և ընտրել ավանդներ՝ ըստ արտաքույթի

տեսակի, մարման ժամանակահատվածի ու
տոկոսագումարների վճարման պարբերականության:

Սահմանվուածես, իրավաբանական անձանց
ուշադրությանն են արժանի կարծամակետ (սկսած
7 օրից) ժամկետային ավանդները: Ֆինանսական
շուկայի փոփոխություններին զուգընթաց Բանկն
օպերատիվ կերպով վերանայում է ավանդների

տոկոսադրույթները՝ առաջարկելով շուկայում
մրցունակ տոկոսադրույթներ: ԱՐՍՎՎԻՄԱԲԱՆԿ-ը

հայկական շուկայում եզակի բանկերից է, որն իր
կորպորատիվ հաճախորդների բանկային գաղահանց
հաշիվների մնացորդների դիմաց վճարում է մրցունակ
տոկոսադրույթներ: 31.12.2008թ.-ի դրությամբ
բանկում ներդրված ավանդների ծավալը կազմել է
մոտ 7 մլրդ ՀՀ դրամ:

ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ


Բանկը, հավատարիմ մնալով հիմնադրման պահին
իր ամրագրված սկզբունքներին և առաջնորդվելով
Բանկի Խորհրդի կողմից հաստատված վարկային

քաղաքականությամբ, շարունակում է իր
կորպորատիվ հաճախորդների բիզնես - ծրագրերի և
ընթացիկ ֆինանսավորումը:

2008թ.-ի ընթացքում Բանկը տրամադրել է
2,2 մլրդ ՀՀ դրամ վարկ: 31.12.2008թ.-ի դրությամբ

ընդանուր վարկային պորտֆելը կազմել է 6,3 մլրդ
ՀՀ դրամ (ֆակտորինգը հաշվի առնված չէ):

Վարկային պորտֆելի աճի դիմանիկան
(մլն ՀՀ դրամ)




2008 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ
վարկային ներդրումներից ստացված տոկոսային
եկամուտը կազմել է 754.2 մլն. ՀՀ դրամ՝ անցած
տարվա 422 մլն. ՀՀ դրամի փոխարեն: Անհուսալի
վարկերի գումարը տարեսկզբին կազմել է 29,4
մլն. ՀՀ դրամ, որը կազմել է պորտֆելի 1.17%-ը:

Բանկի կողմից կատարված աշխատանքների
շնորհիվ դրանց մի մասը մարվել է, և 2008
թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ
անհուսալի վարկերի գումարը կազմել է 17,4 մլն
ՀՀ դրամ, որը կազմել է պորտֆելի 0.27%-ը:

Վարկային ներդրումների միջին
եկամտաբերությունը էական փոփոխություն չի
կրել՝ մնալով 14.39% ցուցանիշի վրա (նախկին
14.56% ցուցանիշի փոխարեն):
Վարկային ռիսկերի զարման և կառավարման
տեսանկյունից լորջ ուշադրություն է
դարձվում վարկային պորտֆելի կառուցվածքի
դիվերսիֆիկացիային, ինչը հնարավորություն
է տալիս Բանկին տնտեսության կոնկրետ
բնագավառում կամ արտաքույթային շուկայում
հնարավոր ճգնաժամային իրավիճակների
պարագայում զերծ մնալ անկանխատեսելի և
էական ռիսկերից: 2008թ.-ի ընթացքում Բանկը Գերմանահայկական

հիմնադրամի (GAF) «Վերականգնվող էներգիայի զարգացում» ծրագրի շրջանակներում տրամադրել է 469.5 մլն ՀՀ դրամ: 2008թ.-ի ընթացքում բանակցություններ են վարչել Միջազգային ֆինանսական կազմակերպությունների հետ փոքր և միջին ձեռնարկություններին վարկավորման համար

Վարկերն ըստ տնտեսության ճյուղերի



Առևտնություն	25%
Հիմնական սպառություն	15%
Արդյունաբերություն	14%
Էներգետիկա	10%
Սննդիարդյունաբերություն	13%
Ծառայություններ	6%

Երակարաժամկետ միջոցների ներգրավման համար:

ՖԱԿՏՈՐԻՆԳ

2008թ.-ի ընթացքում ընդլայնվեցին ներքին ֆակտորինգային ծառայությունների մատուցման ծավալները և որպես նոր ծառայության տեսակ ավելացավ նաև միջազգային ֆակտորինգը: 2008թ.-ի հունվարից Բանկն անդամակցում



է Միջազգային առաջատար ֆակտորինգային ընկերությունների ցանցին (FCI - Factors Chain International), որը հնարավորություն է ընձեռում 65 երկրներում գտնվող 244 անդամ-բանկերի միջոցով ծավալել միջազգային ֆակտորինգային գործառնություններ:

Ելնելով Հայաստանին բնորոշ արտահանման և ներմուծման ուղղությունների ուսումնասիրությունից՝

2008թ.-ի ընթացքում Միջազգային առաջատար ֆակտորինգային ընկերությունների ցանցի անդամ մի շարք կազմակերպությունների հետ կնքվեց 11 միջֆակտորինգային պայմանագիր:

2008թ. ընթացքում հաջողությամբ իրականացվեց արտահանման ֆակտորինգային երկու գործարք:

Ներքին ֆակտորինգից օգտվող հաճախորդների քանակը 2008թ.-ին ավելացավ 17-ով: 2008թ.-ի վերջին հաճախորդների քանակը 24 էր, իսկ դեբիտորների քանակը՝ 20:


Հաշվետու տարվա ընթացքում հաճախորդներին տրամադրվել է 1,546.7 մլրդ ՀՀ դրամի ֆինանսավորում, որից ոչ ոնքը նայեալին պայմանագրերի շրջանակներում (դեբիտորի

Վարկային ռիսկը Բանկը վերցնում է իր վրա) տրամադրվել է 553,3 մլն ՀՀ դրամի ֆինանսավորում, իսկ ռեզորտային պայմանագրերի շրջանակներում (դերիտորի վարկային ռիսկը Բանկը թողնում է հաճախորդի վրա՝ 993,4 մլն ՀՀ դրամի ֆինանսավորում:

2008թ.-ի ընթացքում ներքին շուկայում տրամադրված ֆինանսավորումը մոտ հինգ անգամ գերազանցել է 2007թ.-ի ցուցանիշը, իսկ ֆակտորինգային պորտֆելի ծավալը 2008թ.-ի դեկտեմբերի վերջի դրույթամբ կազմել է 408.5 մլն ՀՀ դրամ՝ մոտ երկու անգամ գերազանցելով 2007թ.-ի նույն ցուցանիշը:

Ստորև ներկայացվում է ֆակտորինգային հաճախորդների ճյուղային պատկանելիությունն ըստ ֆակտորինգային պորտֆելում ունեցած տեսակարար կշռի՝ 2008թ.-ի վերջի դրույթամբ:

Ֆակտորինգային պորտֆելի կառուցվածքն ըստ հաճախորդների ճյուղային պատկանելիության



Մատուցվող ներքին և միջազգային ֆակտորինգային պարկային ռիսկը 2008թ.-ի ընթացքում ավելացել է մոտ 16.5 մլրդ ՀՀ դրամ՝ արժեքով պարտառման առք ու վաճառք, որից 1.1 մլրդ ՀՀ դրամ ծավալով գործառնություններն իրականացվել են կորպորատիվ պարտառման սերով՝ կազմելով Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացված գործառնությունների մոտ 40% ը: Պարտառման սերով իրականացված ուսպու գործառնությունների ծավալը կազմել է ավելի քան 285.5 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով գործեր 200%-ով: Զուգահեռաբար Բանկը պահպանել է իր ակտիվ մասնակցության նաև առաջնային տեղաշխատման սերիս՝ տարվա ընթացքում գնելով մոտ 9.2 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտառման սեր, ինչը 9%-ով ավելին է, քան 2007 թվականին: Այդ ակտիվության շնորհիվ է, որ 2008թ.-ին Բանկը պահպանեց պետական պարտքի կառավարման գծով ՀՀ կառավարության գործակալի կարգավիճակը:

Հառայությունների վերաբերյալ կազմակերպվել են սեմինարներ ինչպես բանկի աշխատակիցների, այնպես էլ գործող և պոտենցիալ հաճախորդների համար: Կատարելագործվել են ֆակտորինգային ծառայությունների մատուցման և ռիսկերի գնահատման համակարգերը:


ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դիերային գործունեություն

Բանկը 2008թ.-ի ընթացքում շարունակել է ակտիվության իրականացնել ՀՀ պետական և կորպորատիվ արժեքորերով գործառնություններ ներքին ֆինանսական շուկայում: Այսպես տարվա ընթացքում երկրորդային շուկայում Բանկն իրականացրել է մոտ 16.5 մլրդ ՀՀ դրամ արժեքով պարտառման սերի առք ու վաճառք, որից 1.1 մլրդ ՀՀ դրամ ծավալով գործառնություններն իրականացվել են կորպորատիվ պարտառման սերով՝ կազմելով Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացված գործառնությունների մոտ 40% ը: Պարտառման սերով իրականացված ուսպու գործառնությունների ծավալը կազմել է ավելի քան 285.5 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով գործեր 200%-ով: Զուգահեռաբար Բանկը պահպանել է իր ակտիվ մասնակցության նաև առաջնային տեղաշխատման սերիս՝ տարվա ընթացքում գնելով մոտ 9.2 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պետական պարտառման սեր, ինչը 9%-ով ավելին է, քան 2007 թվականին: Այդ ակտիվության շնորհիվ է, որ 2008թ.-ին Բանկը պահպանեց պետական պարտքի կառավարման գծով ՀՀ կառավարության գործակալի կարգավիճակը:

ՀՀ պետական պարտառման սերով Բանկի գործառնությունների ծավալների դինամիկան ներկայացված է ստորև բերված գծապատկերում:

Պետական պարտաստոմսերի առաջնային և երկրորդային շուկաներում կատարված գործառնությունների ընդհանուր ծավալը (հազար ՀՀ դրամով)




- Առաջնային շուկայից ճնոր բերված պարտաստոմսերի ծավալը
- Առ ու վաճառքի գործառնություններ երկրորդային շուկայում

Տարվա ընթացքում Բանկը շարունակել է մասնակցել Հայաստանի ֆոնդային բորսայում իրականացվող արտարժույթի առ ու վաճառքի սակարկություններին, հանդես է եկել միջքանակային անկանխիկ արտարժուրային շուկայում՝ իրականացնելով միջազգային հիմնական փոխարկելի արժույթներով առ ու վաճառքի գործառնություններ, որոնց ընդհանուր ծավալը կազմել է մոտ 129.5 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ ավելանալով ավելի քան 50%-ով: 2008թ.-ին Բանկն ավելացրել է արտարժուրային ֆորվարդ գործիքներով իրականացվող գործարքների ծավալը, որը կազմել է ավելի քան 1.72 մլրդ. ՀՀ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով գրեթե 7 անգամ: Ինչ վերաբերյալ է արտարժուրային սվոփ գործիքներով իրականացվող գործարքներին, ապա այս գծով հաշվետու տարվա ընթացքում միջքանակային շուկայում Բանկն իրականացրել է շուրջ 185 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով գործառնություններ՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով 1.8 անգամ: Ընդ որում նշված ծավալի մի զգալի մասը ձևավորվել է արտասահմանյան շուկաներում ծավալած Բանկի գործունեությունից: Հատկանշական է նաև, որ տարվա ընթացքում Բանկն իր հաճախորդների հետ նույնական իրականացրել է սվոփ և ֆորվարդ գործարքներ,

որոնց ծավալը 2008թ.-ի ընթացքում կազմել է համապատասխանաբար 2.8 մլրդ և 111 մլն ՀՀ դրամ: 2008թ.-ին Բանկը շարունակել է ակտիվ գործունեություն ծավալել բանկային ուկու ստանդարտացված ձուլակտորներով, դրանցով տարվա ընթացքում իրականացնելով շուրջ 35.7 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր ծավալով առ ու վաճառքի գործառնություններ, որը նախորդ տարվա համեմատ ավելացել է շուրջ 17%-ով: Բանկի արժուրային գործառնությունների ծավալների դիմացիկան ներկայացված է ստորև բերված գծապատճերում:

Արժուրային գործառնություններ (հազար ՀՀ դրամով)



- Ուկու ստանդարտացված ձուլակտորներով գործառնություններ
- Արժուրային ֆորվարդ և սվոփ գործարքներ
- Արտարժույթի առ ու վաճառքի գործառնություններ

«ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն պատկանում է ՀՀ տարածքում գործող այն եզակի բանկերի թվին, որոնք իրականացնում են ՀՀ դրամի, ՀՀ պետական պարտաստոմսերի և արտարժուրային ֆորվարդ ու սվոփ գործիքների գնանշում Reuters համակարգում, ինչպես նաև ՀՀ դրամի և հիմնական արտարժույթների, ՀՀ պետական և կորպորատիվ պարտաստոմսերի, արտարժուրային ֆորվարդային

գործիքների, միջքանկային ավանդային և ռեպոց գործառնությունների տոկոսադրույքների գնանշում Bloomberg տեղեկատվական համակարգի՝ Բանկին պատկանող էջում:

Բանկն ակտիվ գործունեություն է ծավալում ինչպես ՀՀ տարածքում (բանկերում տեղաբաշխելով և ներգրավելով կարճաժամկետ ու միջնաժամկետ դեպոզիտներ և վարկեր), այնպես էլ միջազգային փողի շուկայում՝ ներդնելով դեպոզիտներ արտասահմանյան առաջնակարգ բանկերում:

Դեպոզիտների և վարկերի ընդհանուր ծավալը դրամային արտահայտությամբ կազմել է համապատասխանարար 212 մլրդ և 28.4 մլրդ ՀՀ դրամ։ Վերջիններս նախորդ տարվա համեմատությամբ աճել են համապատասխանարար

1.24 և 7 անգամ։

Բանկը շարունակում է ներդրումներ իրականացնել զարգացած երկրների ֆիքսված եկամտաբերությամբ արժեթղթերում, մասնավորապես՝ ԱՄՆ-ի, Եվրոպական երկրների, Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև ՀՀ ԿԲ նորմատիվային դաշտի և Բանկի խորհրդի կողմից ընդունելի ռիսկի շրջանակներում ներդրումային վարկանիշ (investment grade) ունեցող այլ երկրների պետական պարտասումներում և կորպորատիվ արժեթղթերում։

Բրոքերային գործունեություն

Բանկի ռազմավարական ուղղություններից է միջազգային շափանիշներին համապատասխան ներդրումային բանկային ծառայությունների, այդ թվում արժեթղթերի շուկայում բրոքերային ծառայությունների մասուցումը Բանկի հաճախորդներին։ Այդ նպատակով Բանկն իր ստեղծման օրվանից ակտիվ գործունեություն է ծավալել նշված դորսում մատուցվող ծառայությունների ամբողջականությունն ապահովելու նպատակով և զգայի աշխատանքներ է տարել այս ոլորտում առաջատար դիրքեր գրավելու համար։ Օրենսդրական ոլորտի բարեփոխումներին անմիջական մասնակցությունից մինչև համապատասխան գործընկերային հարաբերությունների հաստատումը, ինչպես նաև էլեկտրոնային առևտրային համակարգերի և օժանդակ այլ ենթակառուցվածքների ներդրում։ Այս ամենի արդյունքում Բանկն իր բրոքերային գործունեության համապատասխան գործընկերային սկզբ է առաջարկել ներդրումային գործիքների

բավականին լայն տեսականի՝ ամերիկյան, Եվրոպական և ռուսական ընկերությունների ու ներդրումային հիմնադրամների բաժնետոմսեր և դեպոզիտար ստացականներ, պետական և կորպորատիվ պարտատոմսեր, ապրանքային ֆյուչերներ, օտարերկրյա արժեթղթերով ռեպո և մարժինալ գործառնություններ։

Ներդրումային ծառայությունների ոլորտում

Բանկի ձեռքբերումների առումով 2008թ.-ը կարելի է համարել թեկումնային։ Նախ, կապված արժեթղթերի շուկան կարգավորող նոր օրենսդրության ուժի մեջ մտնելու հետ, Բանկը

ՀՀ բանկային համակարգում առաջինն էր, որ ՀՀ կենտրոնական բանկից թույլտվություն ստացավ շարունակել իր հաճախորդներին ներդրումային ծառայություններ մատուցել՝ սպասարկելով նրանց ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան արժեթղթերի շուկաներում։ Բացի այդ Բանկն առաջինն էր նաև ՀՀ բանկային համակարգում, որն անդամակցեց Հայաստանի ֆոնդային բորսային՝ համաշխարհային ճանաչում ունեցող ՆԱՍԴԱ.Ը ՕԷՄ.Ը Համբի կողմից վերջինիս ձեռք բերելուց հետո։ Հաշվետու տարվա ընթացքում Բանկի

բրոքերային հաճախորդների թիվը 2007թ.-ի համեմատ ավելացավ մոտ 3.5 անգամ և Բանկն առաջին անգամ իր հաճախորդների հանձնարարականներով գործարքներ

իրականացրեց արժեթղթերի միջազգային շուկաներում։ Տարին բացարկել էր նաև կատարված գործարքների աշխարհագրությամբ։

Գործարքներ կնքվեցին ինչպես Եվրոպական, այնպես էլ ամերիկյան բրոսաներում շրջանավոր առաջատար ընկերությունների բաժնետոմսերով

և դեպոզիտար ստացականներով։ Բացի դրանից արտաքրսայական գործարքներ կնքվեցին նաև Չինաստանի առաջատար լուկերությունների բաժնետոմսերում ներդրումներ իրականացնող օտարերկրյա ներդրումային հիմնադրամի փայերով։ Ընդհանուր առմամբ, 2008թ.-ի ընթացքում Բանկի հաճախորդների հանձնարարականների հիմա վրա օտարերկրյա արժեթղթերով իրականացվել են թվով 92

բրոքերային գործարքներ 280,663,176.00 մլն ՀՀ դրամին ահարժեք ընդհանուր ծավալով։ Նշենք նաև որ 2008թ.-ի ընթացքում Բանկը

բավականին ակտիվ մասնակցություն է


ունեցել նաև Հայաստանի փոնդային բորսայի
կորպորատիվ արժեթղթերի հարթակներում
իրականացվող սակարգություններին։
Այսպես օրինակ, Քանձն իր հաճախորդների
հանձնարարականներով ՀՀԲ-ում կորպորատիվ
պարտատոմսերով իրականացրել է թվով 37
բրոքերային գործարքներ 318,201,181.92 ՀՀ
դրամ ընդհանուր ծավալով։

Կորպորատիվ պարտատոմսերի բողարկումներ

2008 թվականը կորպորատիվ պարտատոմսերի նոր բողարկումների առումնվ բավական ակտիվ էր: Մասնավորապես տարվա ընթացքում հայաստանյան կազմակերպությունների կողմից իրականացվել են կորպորատիվ պարտատոմսերի 11 բողարկումներ, ընդունում՝ բողարկողների թվում էին ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական լազարավայրերում:

Այդ համատեքստում Բանկը և 2008թ.-ին շարունակել է կորպորատիվ պարտատոմսերի շուկայում իր ակտիվ գործունեությունը:


**“ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ” ՓԲԸ-ի կողմից կազմակերպված
թողարկումները, 2008թ.**



Մասնավորապես Բանկի կողմից 2008 թվականի ընթացքում կազմակերպվել է 1,650 մլն ՀՀ դրամ ծավալով 3 բռղարկում (2 ոչ

Քինանսական կազմակերպության և մեկ վարկային
կազմակերպության համար), որոնց տեսակարար
կշիռը 2008թ. ընթացքում հայաստանյան
կազմակերպությունների կողմից իրականացված
թողարկումներում կազմում է շուրջ 25%:

“ԱՐՍՍՎԻՄՔԱՆԿ” ՓԲԸ-ի կողմից կազմակերպված բողարկումների ծավալները 2007 - 2008թ.



Նշված թողարկումների տեղաբաշխման
գործընթացում Բանկի կողմից կիրառվել են
զարգացած ֆինանսական շուկաներում կիրառվող
ժամանակակից տեխնոլոգիաներ, մասնավորապես,
նշված երեք ծրագրերն իրականացվել են
երաշխավորված տեղաբաշխման եղանակով,
այսինքն՝ անկախ տեղաբաշխման արդյունքներից
Բանկը ցուցաբերել է պարտատոմսերի ամբողջ
ծավալի ծեռք բերման պարտաստակամություն։
Ավելին պարտատոմսերի տեղաբաշխություններն
իրականացվել են ինչպես տեղաբաշխությունների
սինդիկատ ձևավորելու, այնպես էլ
բաժանորդագրություն կազմակերպելու
միջոցով։ Մասնավորապես տեղաբաշխված
պարտատոմսերի գերակշռող մասը՝ շուրջ 62%-ը
կամ 1,025 մլն ՀՀ դրամ ծավալը տեղաբաշխվել է
բաժանորդագրության միջոցով՝ հնարավորություն
տալով փոքր Աերդրորդներին ուղղակիորեն

մասնակցել պարտատոմսերի տեղաբաշխմանը,
իսկ տեղաբաշխումներից մեկի շրջանակում
կազմավորվել է տեղաբաշխողների սինդիկատ:

Նշված թողարկումների կազմակերպման
ընթացքում Բանկը համագործակցել է թողարկող
ընկերությունների հետ պարտատոմսերի
տեղաբաշխման կապակցությամբ մարքեթինգային
միջոցառումների իրականացման գործում,
մասնավորապես կազմակերպվել է պարտատոմսերի
տեղաբաշխման 1 շնորհանդես (Road Show)՝

Փինանսական շուկայի ակտիվ մասնակիցների
և պոտենցիալ ներդրողների մասնակցությամբ:

Բանկը մասնակցել է նաև պարտատոմսերի
թողարկման և տեղաբաշխման գործընթացների
վերաբերյալ հրապարակայնորեն տեղեկատվության
տարածման աշխատանքներին՝ մամուլի
հրապարակումների պատրաստման, հոդվածների
տպագրման, բուկլետների և քացատրական այլ
նյութերի նախապատրաստման, հարցազրույցների
տրամադրման, ինչպես նաև սեփական
ինտերնետային կայքում կարենոր նշանակություն
ունեցող տեղեկատվության բացահայտման միջոցով:

Բանկի կողմից նշված պարտատոմսերի
տեղաբաշխման աշխատանքների ավարտից
հետո իրականացվել են նաև աշխատանքներ
պարտատոմսերի երկրորդային շուկայի
ակտիվացման ուղղությամբ, մասնավորապես՝
Բանկի կողմից տեղաբաշխված պարտատոմսերի
հիմնական մասը ցուցակված է ՆԱՍԴ-ԱՔ ՕԷՍԷ-ՔՍ
Արմենիա ֆոնդային բորսայում, որտեղ Բանկը
միաժամանակ հանդես է գալիս որպես տվյալ
պարտատոմսերի գծով մարքեթ-մեյքեր: Ավելին
Բանկը կազմակերպել է իր կողմից տեղաբաշխված
պարտատոմսերի գնաճշումները Bloomberg
միջազգային տեղեկատվական համակարգում՝
Բանկի անունով բացված ASWI տեղեկատվական
էջում:

2008 թվականին Բանկի կողմից իրականացվել են
նաև նախկինում կազմակերպված թողարկումների
արժեկտրոնների վճարման սպասարկման
աշխատանքները: Մասնավորապես 2008թ.-ին
Բանկի միջոցով իրականացվել է արժեկտրոնների

6 վճարում՝ 139.25 մլն ՀՀ դրամ ընդհանուր
ծավալով, որոնց ընթացքում Բանկն աջակցել
է քողարկողներին և մատուցել հաշվարկային
բանկային ծառայություններ: Նշված
գումարից շուրջ 138.2 մլն ՀՀ դրամը վճարվել
է ներդրողներին՝ որպես արժեկտրոնային
եկամուտ, իսկ շուրջ 1 մլն ՀՀ դրամը փոխանցվել
է ՀՀ պետական բյուջե՝ որպես ֆիզիկական
անձանց գծով եկամտահարկ:

ԿՈՐՊՈՐԱՏԻՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



Արդյունավետ կորպորատիվ կառավարման
համակարգի ստեղծումն ու ներդրումը մշտապես
կարևորվել է Բանկի կողմից և Բանկն իր
կորպորատիվ կառավարման համակարգը
կառուցել է «սահմանափակումների և
հակակշիռների» (checks and balances)
միջազգայնորեն ընդունված սկզբունքների հիման

ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Վրա, որն արտահայտվում է իր գործունեության
ընթացքում հետևյալ հիմնական դրույթների
անվերապահորեն կիրառմամբ՝

- Լիազորությունների և պարտականությունների հստակ
տարանջատում:
- Բաժնետիրոջ, Խորիրոջի, Գործադիր մարմնի, Ներքին
և Արտաքին առողջապահության միջև արդյունավետ
համագործակցություն:
- Հուսափի ներքին հսկողության հաճակարգի
առկայություն, որն ապահովում է ռիսկերի անընդհատ
և շարունակական նոնիթորինգ:
- Առավել ռիսկային ոլորտներում որոշումների
կայացման կողեզիալություն:
- Գործադրությունների և ռիսկային գործողությունների
կատարում առնվազն երկու անձի մասնակցությամբ:
- Հաշվետվողական և տեղեկատվական կայուն
համակարգի առկայություն:
- Կորպորատիվ վարքագծի արթեքների
պահպանում:
- Հստակ ձևավորված ռազմավարական ծրագրի
առկայություն:

2007թ.-ին Բանկում ստեղծված որոշումների
կայացման առանձին կողեզիալ մարմինը՝
Տնօրինությունը 2008թ. ընթացքում արդյունավետ
գործունեություն է ծավալել՝ իրականացնելով
իրեն վերապահված բոլոր գործառույթները:

2008թ.-ի հունվարից Բանկը ներդրել է
ֆինանսական տնօրենի գործառույթը՝ նպատակ
ունենալով առավել ամբողջականորեն վերահսկել
Բանկի ֆինանսական գործառնությունների
պլանավորման, կողովինացման և
հաշվետվողականության ապահովման հարցերը:



Անձնակազմի կառավարման քաղաքականության
նպատակն է՝ Բանկում
անձնակազմի կառավարման որակի
համապատասխանեցումը միջազգային
չափանիշներին և անձնակազմի մասնագիտական
ներուժի բացահայտման համար բարենպաստ
պայմանների ստեղծումը: Մասնավորապես
Բանկը կարևորում է կաղըերի ծառայողական
առաջխաղացման գործոնը, այն է՝ իր աշխատակցի
համար ստեղծել բոլոր անհրաժեշտ պայմանները՝
մասնագիտական աճի, նոր գիտելիքների
ձեռքբերման, նոր հմտությունների տիրապետման,
ինչպես նաև սոցիալական բարեկեցության համար:
Գիտակցելով կաղըերի բազմակողմանի զարգացման
կարևորությունը՝ տարվա ընթացքում Բանկը,
տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների
միջև իրականացրել է ռոտացիոն սկզբունք:
Բանկը մշտապես իրականացնում է կաղըերի
ընտրության և տեղաբաշխման համակարգի
արդյունավետությանն ուղղված միջոցառումներ; Նոր
աշխատակիցների արագ ադապտացումը Բանկի
անձնակազմի կառավարման քաղաքականության

կարևորագույն ուղղություններից է համդիսանում:

2008թ. ընթացքում Բանկում ներդրվեց աշխատակիցների կատարած աշխատանքի արդյունքների գնահատման հանձնաժողովի գաղափարը, ինչպես նաև կատարելազործվեց և ներդրվեց անձնակազմի վարձատրության և խրախուսման քաղաքականությունը՝ ի լրումն արդեն իսկ գործող անձնակազմի կառավարման նորմերի: 2008թ. ընթացքում կատարելազործվեց նաև ստորաբաժնումների և աշխատակիցների

կատարած աշխատանքների ամփոփման ընթացակարգը, մասնավորապես, կիսայնակային կտրվածքով հատուկ ստեղծված Հանձնաժողովի կողմից կազմակերպվեցին աշխատակիցների հետ իրենց կատարողականների քննարկումներ՝ հիմք դառնալով աշխատանքում առավել աշքի ընկած աշխատակիցների խրախուսման համար:

Բանկի գործառնությունների աճին զուգընթաց փոփոխվել է նաև Բանկի անձնակազմի կառուցվածքը և կազմը: 2008թ.-ի ընթացքում Բանկը

համալրել է իր անձնակազմը ինչպես փորձառու կարդերով, այնպես էլ երիտասարդ մասնագետներով (19 նոր աշխատակից), որոնք ակտիվորեն ներգրավվել են Բանկի աշխատանքներում և իրականացվող նախազգերում: Աշխատակիցների թվաքանակի զուտ աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 9%, այդպիսով տարեվերջին կազմելով է 85 նարդ: Բանկի առանցքային աշխատակիցները Հայաստանի ֆինանսարաններին համակարգում ունեն բազմամյա աշխատանքային փորձ: Բանկի

բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն, որոնցից յորը՝ տնտեսագիտական գիտությունների թեկնածուի աստիճան, բոլորը տիրապետում են օտար լեզուների: Անձնակազմն առանձնանում է ոչ միայն իր փորձառությամբ, այլ նաև մասնագիտական խորը գիտելիքներով և անձնական հատկանիշներով: Աշխատակիցների

միջին տարիքը կազմում է 32 տարեկան: Բանկը նշտապես ուշադրություն է դարձնում սեփական կարդերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին ինչպես արդեն նատուրալող, այնպես էլ նախատեսվող ծառայությունները պատշաճ կազմակերպելու և իրականացնելու համար: Անձնակազմի

որակավորման բարձրացման նպատակով աշխատակիցները մասնակցել են ինչպես ՀՀ-ում, այնպես էլ՝ արտերկրում կազմակերպվող տարրեր թեմաներով դասընթացների: Բանկի

փորձառու աշխատակիցների կողմից կազմակերպվել են նաև ներքին սեմինարներ՝ նոր աշխատակիցների՝ պատրաստման և փորձի փոխանակման նպատակով: Տարվա ընթացքում

Բանկի 82 աշխատակից մասնակցել է 62 սեմինարների և շնորհանդեսների ՀՀ տարածքում, արտասահման գործուղվել է 12 աշխատակից՝ մասնակցելով 10 արտասահմանյան

կոնֆերանսների և վերապատրաստումների, ինչպես նաև Բանկում կազմակերպվել է 37

ներքին սեմինար: Աշխատակիցի վերլուծական ներուժի բացահայտման և զարգացման, ինչպես նաև միջանձնային հաղորդակցման և թիմային

աշխատանքների բարելավման նպատակով 2008թ.-ին Բանկի աշխատակիցների կողմից

ներկայացվել են բանկին առնչվող խնդիրների վերաբերյալ թվով 20 վերլուծական աշխատանք: Որոշ գործնթացների կանոնակարգման համար

ստեղծվել են աշխատանքային խմբեր, ինչը կշարունակվի նաև հետագայում:

Բանկը խրախուսում է նաև աշխատակիցների մասնագիտական որակավորումը: Նշենք, որ տարվա ընթացքում Բանկի 4 աշխատակիցի

շնորհվել են բանկի և օտարերկրյա բանկի մասնաճյուղի գլխավոր հաշվապահի, գլխավոր

հաշվապահի տեղակալի պաշտոններում աշխատելու որակավորման հավաստագրեր:


Բանկը համագործակցում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի և Հայաստանում ֆրանսիական համալսարանի հետ՝ ուսանողների պրակտիկան կազմակերպելու և համատեղ ուսումնասիրություններ կատարելու համար:

Որակավորման հարցում Բանկն ունի հետևյալ նույնությունը. ղեկավարների և աշխատակիցների հիմնական կորիզն ունի համապատասխան բարձր որակավորում և բանկային համակարգում աշխատելու բազմանյա փորձ, վերապատրաստման դասընթացներ և անցել Հայաստանի Հանրապետությունում

և արտերկրում, միևնույն ժամանակ Բանկը պատրաստում է նոր երիտասարդ կաղղեր իր ներքին պոտենցիալն ուժեղացնելու համար: Բանկի աշխատակիցները խրախուսվում են ամուսնության, երեխա ունենալու կապակցությամբ, պարբերաբար կազմակերպվում են կորպորատիվ միջոցառումներ՝ երեկոյթներ, քաղաքից

դուրս արշավներ և այլն: Այս ամենը նպաստում է աշխատակիցների միջև միջանձնային հարաբերությունների ամրապնդմանը՝ ձևավորելով համագործակցության և փոխադարձ հարգանքի մթնոլորտ ու բիմային առողջ ոգի: Բանկի գործունեության և զարգացման փուլերին համահումը երկու անգամ վերանայվել է Բանկի կազմակերպական կառուցվածքը:

«ԱՐՍՎԻՄԱԲԱՆԿ» ՓԲԸ ՎԱՐՉԱԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ



Ռիսկերի արդյունավետ կառավարումը և դրանց անընդհատության ապահովումը, մշտապես կարևորվել են բանկի կառավարման մարմինների կողմից: Ռիսկերի կառավարման գործընթացում ընդգրկված են ինչպես Բանկի Խորհուրդը, Գործադիր տնօրենը և Տնօրինությունը, այնպես էլ Բանկի յուրաքանչյուր աշխատակից: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Բանկի ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման անբաժանելի մասը: Բանկն ունի Ռիսկերի կառավարման առանձին ստորաբաժանում, որն անկախ է գործարքներն իրականացնող ստորաբաժանումներից և իրականացնում է Բանկի գործառնությունների նկատմամբ ինչպես ամենօրյա, այնպես էլ որոշակի պարբերականությամբ հսկողություն՝ ստուգելով առավել ռիսկային գործարքները և հետևելով Բանկի ներքին նորմատիվային դաշտն ու նպատակային ցուցանիշներին (benchmark): Բանկում մշակված և ներդրված է վարկային, շուկայական, իրացվելիության և գործառնական ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգ՝

հիմնված ռիսկերի գնահատման և զապման ժամանակակից մերողների և տեխնոլոգիաների վրա: Բանկը պարբերաբար վերանայում

է ներդրումային ուղենիշների գործող ուղեցույցը և ներդրումային սահմանաշափերը՝ համապատասխանեցնելով միջազգային և տեղական ֆինանսական շուկաներում տիրող իրավիճակին: Բանկին բնորոշ ռիսկերի ուսումնասիրության համար պարբերաբար կիրառվում են սրբես-քեստերի մոդելներ:

Բանկում գործում են վարկային ռիսկի գնահատման, արտարժութային (փոխարկային և ածանցյալ) գործառնությունների

սահմանաշափերի որոշման մերողական ուղեցույցներ: Շուկայական ռիսկի գնահատման համար կիրառվում է տոկոսադրույթի ռիսկի կառավարման հիմնական տարրերից մեկը՝ ժամկետայնության ճշգրվածքի (GAP) մոդելը:

2008 թվականին ներդնելով Ներքին

Դիտարկումների մարմնի գործառույթը՝

Բանկը կատարելագործեց Փողերի լվացման և ահարելչության ֆինանսավորման (ՓԼԱՖ)

դեմ պայքարի ոլորտում իր ընդունած ներքին իրավական ակտերը, ինչպես նաև կանոնակարգեց նոր գործառույթներ: Այս հարցում Բանկը կարևորում է ներքին և արտաքին սեմինարների միջոցով աշխատակիցների ուսուցումը, նրանց տեղեկացված լինելը ՓԼԱՖ-ի դեմ պայքարի միջազգային օրենսդրությանն ու կանոններին:

Բանկում գործում է Ներքին առողջության ստորաբաժանում, որը վերահսկում է

Բանկի Խորհրդի և Գործադիր մարմնի կողմից ընդունված ներքին ակտերի՝

(քաղաքականություններ, կանոնակարգեր,

կարգեր և այլն) Բանկի գործունեությանը համապատասխանելու գործոնը, ինչպես նաև ստուգումների միջոցով բացահայտում է ռիսկերը:

Բանկում գործում են խորհրդատվական և որոշումներ կայացնող կոլեգիալ մարմիններ՝

Վարկային, Ներդրումային, Ֆինանսական դիտարկումների, Գործունեության

համապատասխանության հսկման և Հաճախորդների հետ հարաբերությունների

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

կառավարման կոմիտեներ, իսկ 2008 թվականից սկսած՝ նաև Տնօրինություն: ՈՒխկերի կառավարման գործընթացը կանոնակարգում է Բանկի Խորհուրդը, որը հաստատում է սահմանաշափեր, ուղենիշներ, ներդրումային ուղեցույցներ, վարկառուների և գործընկերների ընտրության չափանիշներ, գրավների նկատմամբ պահանջներ և այլն, որոնք սահմանափակում են Բանկի վարկային և շուկայական ռիսկերը: Բանկի գործառնական ռիսկերը սահմանափակելու նպատակով Բանկում բոլոր գործառնություններն իրականացվում են առնվազն երկու անգի (աշխատակցի) մասնակցությամբ: Բանկում գործում են աշխատակիցների իրավասությունները և պարտականությունները հստակ տարանջատող ներքին ակտեր, ինչպես նաև «փաշվող» հաշվետվորյունների համակարգ: Վարկային ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացման տեսանկյունից նշանակալի ձեռքբերում էր 2008թ. վարկավորման դեպարտամենտում Ձևակերպումների և հսկողության բաժնի ստեղծումը, որի շնորհիվ վարկերի վերլուծությունը, ձևակերպումներն ու դրանց նկատմամբ հսկողությունը կիրականացվի ավելի արդյունավետ կերպով: ՈՒխկերի կառավարման տեսանկյունից կարևորվում է այն փաստը, որ USAID FSDP ծրագիրը 2008թ.-ին Բանկում իրականացրել է ՈՒխկերի կառավարման գնահատում, որի արդյունքում Բանկը ստացել է բավականին բարձր գնահատական՝ համեմատած այլ բանկերի հետ, որոնցում USAID FSDP ծրագիրն իրականացրել է նմանատիպ գնահատում: Գնահատման արդյունքում FSDP ծրագիրը կատարել է դիտողություններ և առաջարկություններ, որոնք ընդունելի են Բանկի համար:



Ի սկզբանե գիտակցելով տեղեկատվական տեխնոլոգիաների կարևորությունը բանկային համակարգում «ԱՐՄՍՎՀԱՄԲԱՆԿ» ՓԲԸ-ն իր գործունեության հենց սկզբից շարունակաբար աշխատանքներ է տարեկ համապատասխան տեխնիկական հազեցվածության և տեղեկատվական ապահովման հարցերի ուղղությամբ: Իր գարգացման ուղղված քայլերին համահունչ՝ Բանկը շարունակում է ընդլայնել համագործակցությունը մի շաբաթ ներքին ու միջազգային վճարային և տեղեկատվական համակարգեր (BankMail, CBA-Net, SWIFT, Bloomberg, Reuters, MarketMaker, Quik) տրամադրող ընկերությունների հետ: 2008թ.-ին տեղի է ունեցել Տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի աճ (նոր համակարգերի ներդնում, նոր տեխնիկայի/սերվերների ձեռքբերում, և այլն): Հզորացվել են առկա բոլոր սերվերները, որոնք ել ավելի են արագացրել վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը, բոլոր համակարգերի աշխատանքը, ինչպես նաև ապահովել են Բանկի բոլոր համակարգերի աշխատանքի անընդհատությունը և անվտանգությունը: 2008թ.-ին Բանկը ձեռք է բերել նոր «Գործառնական օր» համակարգ (ՀԾ Բանկ 4.0) և կատարելով բարեհաջող անցում այն դրել է գործարկման մեջ: Նոր համակարգի ներդրման համար

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ճեզը են բերվել հզոր սերվերներ, նորագույն ծրագրային փաթեթներ, ստեղծվել են համակարգի անընդհատությունն ապահովող պահուստային համակարգեր: «Գործառնական օր» համակարգի հետ միաժամանակ ուսումնասիրվել և գործարկվել

Է նոր «Հաճախորդ-Բանկ» փաթեթը, որը թույլ է տալիս Բանկի հաճախորդներին տեղեկատվություն ստանալ իրենց հաշվի մնացորդի, կատարված գործառնությունների վերաբերյալ, ինչպես նաև իրականացնել փոխանցումներ և փոխարկումներ: Գործարկվել է նոր “Key-banking” համակարգ, որը թույլ է տալիս հաճախորդներին ֆինանսական գործարքներ կատարել հեռախոսով, ֆարսով և փոստով: Բանկն անցում է կատարել SWIFT համակարգի նոր տարրերակի:

2008թ.-ին ձևավորվել և տեղադրվել է Բանկի նոր վեբ կայքը, որը պարունակում է ավելի շատ տեղեկատվություն և համալրվել է նոր էջերով, որոնք արտացոլում են Բանկի նորությունները և իրադարձությունները, առաջարկվող նոր գործիքներն ու ծառայությունները, ինչպես նաև պարտատոմսերի գնի հաշվարկման բանաձև: Տեղադրվել են կայքի նոր մոնիթորինգային համակարգեր, որոնք թույլ են տալիս ունենալ կայքի աշխարհի տարբեր տեղերում հասանելիության մասին բարձր ինֆորմացիա և վերահսկել նրա անընդհատությունը:

Տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտում գործող կանոնակարգերի և տեղեկատվական անվտանգության կանոնների համապատասխանեցումը “COBIT” միջազգային ստանդարտներին վերահսկելի է դարձնում SS ենթակառուցվածքի ներդրումների և ոփսկերի հավասարակշռությունը և նպաստում է տեղեկատվական տեխնոլոգիաների ռեսուրսների, ինչպես նաև բանկում բոլոր գործընթացների արդյունավետ կառավարմանը: Գործող կանոնակարգերի համապատասխանեցումը “COBIT” միջազգային ստանդարտներին նպաստում է տեղեկատվական տեխնոլոգիաների ռեսուրսների, ինչպես նաև բանկում բոլոր գործընթացների արդյունավետ կառավարմանը:




«ԱՐՍՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ-ն ավարտել է իր գործունեության շրրորդ տարին՝ բոլոր հիմնական ցուցանիշների գծով գրանցելով էական աճ: Հաշվետու տարվա ընթացքում Բանկի ընդհանուր ակտիվները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ աճել են 2,6 մլրդ ՀՀ դրամով կազմելով 23,5 մլրդ ՀՀ դրամ: Ակտիվների կազմում տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջները նվազել են 6,2 մլրդ ՀՀ դրամով, իսկ ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշվի մնացորդը, հաճախորդներին տրված վարկերը, հետգննան պայմանագրերով գրավադրված (վաճառված՝ հետ գնելու պայմանով) արժեքները և հիմնական միջոցներն աճել են համապատասխանաբար 1,5 մլրդ ՀՀ դրամով, 2,6 մլրդ ՀՀ դրամով, 4,4 մլրդ ՀՀ դրամով և 231 մլն ՀՀ դրամով: Ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում արժեքները՝ 45%, վարկերը՝ 30%, միջանկային ավանդները՝ 12% և ՀՀ կենտրոնական բանկում թղթակցային հաշվի մնացորդը՝ 11%:

Հաշվետու տարվա ընթացքում Բանկի ընդհանուր պարտավորությունները նախորդ ժամանակահատվածի համեմատությամբ

աճել են 967 մլն ՀՀ դրամով կամ 5,7%-ով՝ կազմելով մոտ 17,9 մլրդ ՀՀ դրամ:


Ակտիվների կառուցվածքը և դիմամիկան



Պարտավորությունների կազմում նույնապես տեղի է ունեցել կառուցվածքային փոփոխություն: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները և առևտրային պարտավորությունները նվազել են համապատասխանաբար 691 մլն ՀՀ դրամով և 178 մլն ՀՀ դրամով, իսկ իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների նկատմամբ պարտավորություններն աճել են 1,9 մլրդ դրամով: Պարտավորությունների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմում ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները՝ 50,5% և հաճախորդներից (իրավաբանական և ֆիզիկական անձինք) ներգրավված միջոցները՝ 49,2%: Հաշվետու տարվա ընթացքում բանկի գույն տոկոսային եկամուտները նախորդ ժամանակաշվածի համեմատությամբ աճել են 42%-ով կամ 223 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 751 մլն ՀՀ դրամ: Տոկոսային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է եղել վարկային ներդրումներից ստացված եկամտի

մոտ 78,5 % աճով և արժեքավորում ներդրումներից ստացված եկամտի 2,3 անգամ աճով: Վարկերից և


Պարտավորությունների կառուցվածքը և դիմամիկան



արժեքավորությունների ստացված եկամուտների տեսակարար կշիռը տոկոսային եկամուտներում կազմել է 85%:

Բանկի տարեկան շահույթի աճի դիմամիկան և շահույթաբերության ցուցանիշները

մլն ՀՀ դրամ



2008թ-ին Բանկի զուտ շահույթը կազմել է մոտ 280 մլն ՀՀ դրամ: 2007թ-ի համեմատությամբ շահույթը նվազել է 54 մլն ՀՀ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ներգրավված ռեսուրսների թանկացմամբ, ՀՀ պետական պարտատոմսերի տարեկան եկամտաբերության նվազմամբ, ինչպես նաև ուսկով իրականացվող գործարքների ծավալների կրծքային մասնակիությամբ: Արդյունքում Բանկի ստեղծման օրվանից մինչև 2008թ-ի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում կուտակված չբաշխված շահույթը կազմել է 559 մլն ՀՀ դրամ:

2008թ-ի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր կապիտալը կազմել է 5,5 մլրդ ՀՀ դրամ՝ նախորդ տարվա նկատմամբ աճելով 40,6%-ով, ընդ որում աճի հիմնական մասը բաժին է ընկել հաշվետու տարվա վերջին եռամսյակի ընթացքում իրականացված կանոնադրական կապիտալի համարմանը, որն աճել է 33%-ով՝ կազմելով ավելի քան 5 մլրդ ՀՀ դրամ:

Տարեկան Հաշվետվորյուն
2008 }



Որակավորված առևտիսորներ և հաշվապահներ, կառավարման և հարկային խորհրդատուններ, իրավախորհրդատուններ
Auditors and Chartered Accountants, Management, Tax and Legal Consultants
Գլոբալ թորնուն Ինտերնատիվ անդամ
Member of Grant Thornton International Ltd.

Ֆինանսական
հաշվետվություններ
և անկախ
առողջապահություն
եզրակացություն

Արմսվիրաբեկ
Փակ Բաժնետիրական
Ընկերություն
31 դեկտեմբերի 2008թ.

Բովանդակություն

36	Անկախ առողջապորի եզրակացություն
37	Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
38	Հաշվապահական հաշվեկշիռ
39	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
40	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

ԱՆԿԱԽ
ԱՌԴԴԻ ՏՈՐԻ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի բաժնետիրոջը և խորհրդին

Մենք առողիտի ենք ենթարկել «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ «Բանկ») կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները 2008թ. դեկտեմբերի 31-ին ավարտված ֆինանսական տարվա համար, որոնցից ստացվել է հաշվապահական հաշվեկշիռ, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամանական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները՝ Առողիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: 2009թ. ապրիլի 02 ամսաթվով թվագրված մեր հաշվետվությունում մենք ներկայացրել ենք դրամական եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ պատրաստված համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, որոնցից ստացվել է սույն հակիրճ ֆինանսական տեղեկությունը:

Մեր կարծիքով, հակիրճ ֆինանսական տեղեկատվությունը բոլոր էական առումներով համապատասխանում է ֆինանսական հաշվետվություններին, որոնցից այն ստացվել է:

2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների և դրամական միջոցների հոսքերի, ինչպես նաև առողիտի շրջանակների վերաբերյալ ավելի լավ պատկերացում կազմելու համար հակիրճ ֆինանսական տեղեկատվությունը պետք է դիտարկել հակիրճ ֆինանսական տեղեկատվության ստացման համար հիմք հանդիսացող ֆինանսական հաշվետվությունների, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեր առողիտորական եզրակացության հետ համատեղ:

Արման Փինարբասի
Տնօրեն/բաժնետիր
Արեն Աղաջանյան
Առողիտոր



Արեն Աղաջանյան
Առողիտոր

Գրանք Թորնթոն Ամիո ՍՊԸ
02 ապրիլ 2009թ.
ք. Երևան

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՍԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Տարեկան Հաշվետվություն
2008

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2008 դեկ.31-ին ավարտված տարվա համար (ստուգված)	2007 դեկ.31-ին ավարտված տարվա համար (ստուգված)
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	6	1,652,478	807,373
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	6	(901,720)	(279,685)
Չուտ տոկոսային եկամուտներ		750,758	527,688
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	7	57,823	37,554
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	7	(11,551)	(12,853)
Չուտ կոմիսիոն և այլ եկամուտներ		46,272	24,701
Չուտ առևտրային եկամուտ	8	111,590	35,364
Վաճառքի համար մատչելի ներդրումներից գուտ օգուտ		45,971	163,162
Այլ եկամուտներ	9	43,281	78,351
Վարկային կորուստների (արժեզրկման ծախս) /հակադարձում	10	(50,389)	8,793
Անձնակազմի գծով ծախսեր	11	(405,262)	(267,061)
Հիմնական միջոցների մաշվածություն	18	(25,275)	(22,740)
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	19	(3,732)	(3,314)
Այլ ծախսեր	12	(158,583)	(135,076)
Ծահույթ մինչև հարկում		354,631	409,868
Ծահութահարկի գծով ծախս	13	(74,868)	(75,719)
Տարվա շահույթ		279,763	334,149

7-ից 53 էջերում ներկայացված ծանոթագրությունները
կազմում են ֆինանսական հաշվետվությունների
բաղկացուցիչ մասը:

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿԾԻՈՆ

Հազար ՀՀ դրամ	Ծանոթ.	2008 դեկ. 31-ի դրույյամբ (ստուգված)	2007 դեկ. 31-ի դրույյամբ (ստուգված)
---------------	--------	---	---

ԱԿՏԻՎՆԵՐ

Դրամական միջոցներ և մնացորդներ ՀՀ կենտրոնական բանկում	14	2,465,474	962,795
Թանկարժեք մետաղներ		110,496	-
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	15	2,871,730	9,105,933
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ	16	7,156,858	4,509,799
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	17	2,413,411	2,554,627
Հետքնման պայմանագրերով գրավադրված արժեքներ	25	8,055,331	3,667,165
Հիմնական միջոցներ	18	289,892	58,038
Ոչ նյութական ակտիվներ	19	47,765	26,109
Հետաձգված հարկային ակտիվ	13	25,184	42,480
Այլ ակտիվներ	20	68,965	9,982
Ընդամենը՝ ակտիվներ		23,505,106	20,936,928

ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	21	9,081,274	9,772,661
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	22	8,844,940	6,969,347
Առևտրային պարտավորություններ	23	-	177,974
Ընթացիկ հարկի գծով պարտավորություն		16,396	55,668
Այլ պարտավորություններ	24	22,343	21,457
Ընդամենը՝ պարտավորություններ		17,964,953	16,997,107

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՎԻԺՈՎԱԼ

Բաժնետիրական կավիժովալ	26	5,001,000	3,750,000
Գլխավոր պահուան		100,000	20,000
Այլ պահուատներ		(119,965)	(189,534)
Չբաշխված շահույթ		559,118	359,355
Ընդամենը՝ սեփական կավիժովալ		5,540,153	3,939,821
Ընդամենը՝ պարտավորություններ և սեփական կավիժովալ		23,505,106	20,936,928

Ֆինանսական հաշվետվորությունները, ներկայացված 3-ից 53 էջերում, հաստատվել են Բանկի դեկավարության կողմից 2009թ. ապրիլի 2-ին և ստորագրվել են Բանկի գործադիր տնօրենի և գլխավոր հաշվապահի կողմից:

7-ից 53 էջերում ներկայացված ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվորությունների բաղկացուցիչ մասը:

Գ. ՄԱՅԱԿԱՆ
Գործադիր տնօրեն

Ս. ԲԱՐԴԱՐՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

**ՍԵՓԱԿԱՆ
ԿԱՊԻՏԱԼՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Տարեկան Հաշվետվություն
2008

Հազար ՀՀ դրամ

	Բաժնե- տիրական կապիտալ	Գլխավոր պահուստ	Վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերապնա հաստման պահուստ	Կուտակված շահույթ	Ընդամենը
Հաշվեկշիռը 01.01.2007թ. դրույթամբ (ստուգված) Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ վնաս	3,000,000	-	12,898 (141,599)	45,206	3,058,104 (141,599)
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցված զուտ օգուտ Հետաձգված հարկի ազդեցությունը	-	-	(111,441)	-	(111,441)
Կապիտալում ուղղակիորեն ճանաչված ընդհանուր եկամուտներ և ծախսեր Տարվա շահույթ Ընդամենը տարվա եկամուտներ և ծախսեր	-	-	(202,432)	-	(202,432)
Բաժնետիրական կապիտալի ավելացում	750,000	-	-	-	750,000
Հատկացում գլխավոր պահուստին	-	20,000	-	(20,000)	-
Հաշվեկշիռը 31.12.07թ. դրույթամբ (ստուգված) Իրական արժեքի փոփոխությունից չվաստակված զուտ օգուտ	3,750,000	20,000 - 21,691	(189,534) - 359,355	359,355 - 21,691	3,939,821 21,691
Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆինանսական արդյունքին փոխանցած զուտ վնաս	-	-	65,330	-	65,330
Հետաձգված հարկի ազդեցությունը	-	-	(17,452)	-	(17,452)
Կապիտալում ուղղակիորեն ճանաչված ընդհանուր եկամուտներ Տարվա շահույթ Ընդամենը տարվա եկամուտներ	-	-	69,569 - 69,569	-	69,569 279,763 279,763 349,332
Բաժնետիրական կապիտալի ավելացում	1,251,000	-	-	-	1,251,000
Հատկացում գլխավոր պահուստին	-	80,000	-	(80,000)	-
Հաշվեկշիռը 31.12.08թ. դրույթամբ (ստուգված)	5,001,000	100,000	(119,965)	559,118	5,540,153

**ԴՐԱՄԱԿԱՆ
ՍԻԶՈՑՆԵՐԻ
ՀՈՍՔԵՐԻ
ՍԱՍԻՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Տարեկան Հաշվետվություն
2008

Հազար ՀՀ դրամ

	31.12.08թ-ին ավարտված տարվա համար (ստուգված)	31.12.07թ-ին ավարտված տարվա համար (ստուգված)
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր	1,543,895	752,998
Ստացված տոկոսներ	(885,432)	(269,309)
Վճարված տոկոսներ	57,823	37,554
Ստացված կոմիսիոն վճարներ	(11,551)	(12,853)
Վճարված կոմիսիոն գումարներ	46,405	(8,328)
Առևտրային արժեքրերից օգուտ/(վճառ)	111,590	43,692
Արտարժութային գործառնություններից իրացված շահույթ	13,667	18,296
Նախկինում դուրս գրված վարկերի վերադարձ	(372,756)	(234,824)
Վճարված աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	126,009	55,533
Ստացված այլ գործառնական եկամուտներ	(267,777)	(133,172)
Վճարված այլ գործառնական ծախսեր	361,873	249,587
Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները		
(Ավելացում)/նվազում գործառնական ակտիվներում		
Վաճառքի համար մատչելի արժեքրեր	(4,162,262)	(1,460,203)
Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	4,671,272	(5,116,350)
Հաճախորդներին տրված վարկեր և փոխառվություններ	(2,635,233)	(2,358,030)
Այլ ակտիվներ	(181,317)	(2,829)
Ավելացում/(նվազում) գործառնական պարտավորություններում		
Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	(5,068,466)	89,237
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ	1,842,438	5,674,537
Այլ պարտավորություններ	(37,549)	1,536
Չուտ դրամական հոսքեր գործառնական գործունեությունից մինչև շահութահարկը	(5,209,244)	(2,922,515)
Վճարված շահութահարկ	(71,389)	(24,183)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(5,280,633)	(2,946,698)
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Ստացված շահարաժիններ	435	245
Ներդրումային արժեքրերի վաճառք և իրացում	-	20,000
Հիմնական միջոցների առք	(257,225)	(17,016)
Ոչ նյութական ակտիվների առք	(25,388)	(3,991)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(282,178)	(762)
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
Բաժնետիրական կապիտալի բողարկում	1,251,000	750,000
Ֆինանս. կազմակերպ. վարկերի ստացում	4,264,033	5,856,352
Ֆինանսական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	5,515,033	6,606,352
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ	(47,778)	3,658,892
Դրամական միջոցների և դրանց համարժեքների ժամանակաշրջանի սկզբի դրությամբ	4,286,997	876,030
Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	35,138	(247,925)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների ժամանակաշրջանի վերջի դրությամբ (ծանոթ. 14)	4,274,357	4,286,997

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործունեության բնույթը և ընդհանուր տեղեկություններ

«Արմավիսբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) հիմնվել է 2004 թվականին և հանդիսանում է փակ բաժնետիրական ընկերություն՝ գործելով Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ «ՀՀ») օրենսդրության շրջանակներում: Բանկը գրանցվել է 07 հոկտեմբերի 2004 թվականին ՀՀ կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ԿԲ») կողմից N84 արտոնագրային համարով:

Բանկի հիմնական գործունեությունը կորպորատիվ, ներդրումային և մասնավոր ֆինանսների կառավարմանը բնորոշ ծառայությունների մատուցումն է՝ ֆինանսական գործիքներում ներդրումներ, ֆիզիկական և իրավաբանական անձանցից ավանդների ներգրավում, ֆինանսավորման (վարկավորում, ֆակտորինգ) և բանկային այլ ծառայությունների մատուցում:

Բանկի գլխավոր գրասենյակը գտնվում է Երևանում: Բանկի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, 0010, ք. Երևան, Խանջյան 13/2:

2 Գործարար միջավայր

Հայաստանում շարունակական բնույթ են կրում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները: Որպես զարգացող շուկա, Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում: Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացրած գործարներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ գուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով:

2008թ. վերջին պատրաստված իր հաշվետվությունում «Moody's Investors Service» գնահատող միջազգային գործակալությունը Հայաստանին տվել է *Ba2* «Կայուն հեռանկար» անկախ գնահատականը: Համաձայն այս հաշվետվության՝ երկրի պետական պարտքերի փոքր ծավալները և վերաֆինանսավորման նվազագույն ռիսկերը թույլ են տալիս հիմնավորել ներկա միջավայրի կայուն գնահատականը: Հիմնական ֆինանսական ռիսկ է հանդիսանում նվազ եկամուտը, սակայն իրավիճակը մեղմում են պարտքերի մարման շատ վատահելի անցյալը, պաշտոնական վարկատունների հետ լավ հարաբերությունները, ինչպես նաև Սփյուռքի կողմից ապահովող իրացվելիությունը:

Հայաստանում բիզնեսի կապիտալում օտարերկրյա կապիտալի փոքրածավալ ներգրավվածության, ինչպես նաև Հայաստանի տնտեսության մեջ համեմատաբար քիչ օտարերկրյա ներդրումների և համաշխարհային տնտեսության համապատասխան սեկտորներից կողմացման արդյունքում, ավելի զարգացած և ձեսվորված տնտեսությամբ երկրներում առկա ֆինանսական ճգնաժամը հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ այնքան էլ խիստ և նկատելի չէ Հայաստանում:

Հայաստանի կառավարությունն ուսումնասիրում է ճգնաժամի պատճառներն ու հետևանքները՝ մշակելու համար միջոցառումների ծրագիր՝ պայքարելու ընդդեմ այդ հետևանքների, եթե ճգնաժամը անխուսափելի դառնա Հայաստանի համար:

Այսուամենայնիվ, շուկայական ավելի խիստ ճնշման պայմաններում Հայաստանի տնտեսությունը, ինչպես նաև Բանկը կարող են ընկնել այդ ճգնաժամի ազդեցության տակ, ինչի հետևանքները կարող են լինել նշանակալի: Քանի դեռ այս անորոշություններում առկա դատողություններն ու ենթադրությունները շատ են, դեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Բանկի ակտիվների և պահպների մնացորդային արժեքի վրա:

Հետևաբար, Բանկի ֆինանսական հաշվետվություններն ամեն դեպքում չեն ներառում ճշգրտումների ազդեցությունը, որոնք կարող են անհրաժեշտ համարվել, եթե ներկա համաշխարհային ճգնաժամի ազդեցությունը նկատելի և վստահաբար չափելի լիներ Հայաստանում:

3 Հաշվետվությունների պատրաստման հիմքերը

3.1 Համապատասխանությունը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՍՍ), որոնք հաստատվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհուրդի (ՀՀՍՍԽ) կողմից և Սեկանճարանությունների՝ հաստատված Ֆինանսական Հաշվետվությունների Սեկանճարանությունների Միջազգային Կոմիտեի կողմից (ՖՀՍՍԿ):

3.2 Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա Ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Այլ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները հաշվառվում են ամորտիվացված կամ պատմական արժեքով:

3.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Բանկի գործառնական արժույթը դա այն հինական տնտեսական միջավայրի արժույթն է, որտեղ գործում է Բանկը: Բանկի գործառնական և ներկայացման արժույթ է հանդիսանում Հայաստանի Հանրապետության դրամը (այսուհետ՝ ՀՀ դրամ), քանի որ այս արժույթն է լավագույն կերպով արտացոլում ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Բանկի գործարքների տնտեսական բովանդակությունը: Բանկը պատրաստում է իր հաշվետվությունները ՀՀ գործող օրենսդրության և հաշվապահական հաշվառման ստանդարտների պահանջներին համապատասխան: Սույն ֆինանսական հաշվետվությունները հիմնված են Բանկի հաշվառման գրանցումների վրա, որոնք ճշգրտվել և վերադասակարգվել են ՖՀՍՍ-ին համապատասխանեցնելու նպատակով: Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ: ՀՀ սահմաններից դուրս դրամը ազատ փոխարկելի չէ:

3.4 Վերադասակարգում

Անհրաժեշտության դեպքում համադրելի թվերը ճշգրտվել են՝ ընթացիկ տարում ներկայացման փոփոխությունների հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

3.5 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընթացիկ տարում Բանկը ընդունել է իր գործունեության համար համապատասխան և 2008թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանի համար կիրառելի նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի («ՀՀՍՍԻ») և ՀՀՍՍԻ-ի Հաշվետվությունների Մեկնաբանման Հանձնաժողովի («ՀՄՀ») կողմից:

3.6 Բանկի կողմից դեռևս չկիրառվող ստանդարտներ և մեկնաբանություններ

Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման օրվա դրությամբ լույս են տեսել մի շարք նոր ստանդարտներ, գործող ստանդարտների վերաբերյալ փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք դեռևս ուժի մեջ չեն մտել: Բանկը մինչ այժմ չի ընդունել այդ ստանդարտներից և մեկնաբանություններից որևէ մեկը:

Վեկավարությունը կանխատեսում է, որ նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները կը նդունվեն Բանկի կողմից՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվանից հետո առաջիկա ժամանակաշրջանում:

Նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները՝ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս կիրառելի չեն, սակայն հետագայում կիրառելի կլինեն Բանկի ֆինանսական հաշվետվությունների համար

Փոփոխություններ ՀՀՍՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» (վերանայված 2007թ.)

Այս ստանդարտում նոր փոփոխությունն ազդում է սեփական կապիտալում սեփականատերերի հետ գործարքների ներկայացման վրա և առաջարկում է ամբողջական եկամուտների մասին հաշվետվությունը: Կազմողները հնարավորություն կունենան ներկայացնել եկամտի և ծախսի հողվածները և այլ ամբողջական եկամտի հողվածները կամ մեկ ամբողջական եկամուտների մասին հաշվետվությունում՝ ենթագումարներով, կամ երկու առանձին հաշվետվություններում (առանձին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, որին կիետելի այլ ամբողջական եկամուտների մասին հաշվետվություն): Այս փոփոխությունը չի ազդում Բանկի ֆինանսական վիճակի կամ արդյունքի վրա, բայց կառաջացնի լրացուցիչ բացահայտումների անհրաժեշտություն: Ներկայում դեկավարությունը գնահատում է այս փոփոխության մանրամասն ազդեցությունը Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

ՀՀՍՍ 23 «Փոխառության ծախսումներ» (վերանայված 2007թ.)

Համաձայն այս փոփոխության փոխառության ծախսումները պետք է կապիտալացվեն, այնքանով, որքանով դրանք անմիջականորեն կապված են որակավորվող ակտիվի ձևորերման, արտադրության կամ կառուցման հետ, որոնց նպատակային օգտագործման կամ վաճառքի պատրաստ լինելու համար անհրաժեշտ է ժամանակ: Համաձայն փոփոխված ստանդարտի անցումային մասի, մինչ օրս ծախս ճանաչված փոխառության ծախսումների գծով փոփոխություններ չեն իրականացվելու: Այս փոփոխության հետևանքով հետագա ժամանակաշրջանում Բանկի տոկոսային ծախսը կնվազի, և կաճեն կառուցման մեջ գտնվող որակավորվող ակտիվի գծով կապիտալացվող փոխառության ծախսումները:

Նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները՝ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս կիրառելի չեն և հավանաբար հետազայտմ կիրառելի չեն լինի Բանկի ֆինանսական հաշվետվությունների համար

ՖՀՍՍ 8 «Գործառնական սեզմենտներ»

Սա բացահայտման ստանդարտ է, որը հանգեցնում է Բանկի հաշվետու սեզմենտների վերաներկայացմանը, բայց չի ունենա որևէ ազդեցություն ֆինանսական արդյունքների կամ վիճակի վրա: Այս ստանդարտի կիրառումը պարտադրված չէ Բանկի համար:

ՖՀՍՍՍԿ (IFRIC)13 «Հաճախորդների հավատարմության գծով միջոցառումներ»

Այս մեկնաբանությունը պարզաբանում է, որ եթե ապրանքները կամ ծառայությունները վաճառվում են, տրամադրելով հաճախորդի պահպանման խրախուսական միջոցներ (խրախուսական միավորներ կամ անվճար ապրանքներ), գործարքը դիտվում է բազմատարր և հաճախորդի կողմից ստացված համապատասխան հատուցումը բաշխվում է գործարքի տարրերի միջև համամասնորեն՝ կիրառելով իրական արժեքը: Բանկը ներկայումս չի իրականացնում նման ծրագիր: Ղեկավարության համոզմամբ այս մեկնաբանությունը կիրառելի չէ Բանկի ֆինանսական հաշվետվությունների համար:

ՖՀՍՍ 2 (Փոփոխություն) «Բաժնեմասի վրա հիմնված վճարումներ»

Այս փոփոխությունը վերաբերվում է իրավունքի տրամադրման պայմաններին և չեղյալ ճանաչմանը: Բանկը ներկայում չի վարում բաժնեմասերի վրա հիմնված վճարման ցուցակ: Ղեկավարության համոզմամբ այս փոփոխությունը կիրառելի չէ Բանկի ֆինանսական հաշվետվությունների համար:

Տարեկան բարեփոխումներ 2008

«ՀՀՍՍԽ»-ի կողմից բողարկվել է՝ «Միջազգային ֆինանսական հաշվետվությունների Ստանդարտների Բարեփոխումներ 2008»-ը: Բարեփոխումների մեծ մասը կիրառելի են 2009թ-ի հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ղեկավարության համոզմամբ բարեփոխումները Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն չեն ունենա:

ՀՀՍՍ 23 (Փոփոխություն) «Փոխառության ծախսումներ» (ուժի մեջ է 2009թ-ի հունվարի 1-ից):

Փոխառության ծախսումների սահմանումը փոփոխվել է, ուստի տոկոսային ծախսերը հաշվարկվում են, կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ սահմանված ՀՀՍՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը» ստանդարտով (ուժի մեջ է 2009թ-ի հունվարի 1-ից): Բանկը ՀՀՍՍ 23-ը (Փոփոխություն) կկիրառի առաջընթաց՝ կապիտալացնելով փոխառության ծախսումները, սկսած 2009թ.-ի հունվարի 1-ից:

ՀՀՍՍ 36 (Փոփոխություն) «Ակտիվների արժեզրկում» (ուժի մեջ է 2009թ-ի հունվարի 1-ից)

Եթե իրական արժեքից հանած վաճառքի ինքնարժեքը հաշվարկվում է գեղշված դրամական հոսքերի հիման վրա, ապա օգտագործման արժեքի հաշվարկի համապատասխան բացահայտումներ պետք է իրականացվեն: Բանկը կկիրառի ՀՀՍՍ 36 (Փոփոխություն) և, կիրառելիության դեպքում, կներկայացնի արժեզրկման բեսթերի նկատմամբ պահանջվող բացահայտումները 2009թ.-ի հունվարի 1-ից:

ՀՀՍՍ 38 (Փոփոխություն) «Ոչ նյութական ակտիվներ» (ուժի մեջ է 2009թ.-ի հունվարի 1-ից)

Կանխավճարը պետք է ճանաչվի այն դեպքում, եթե վճարումը կատարվել է նախապես՝ ապրանքի օգտագործման նկատմամբ իրավունք ձեռք բերելու կամ ծառայություն ստանալու համար:

Ի լրումն, փոփոխության արդյունքում դուրս են եկել «հազվադեպ, եթե երբեք» բառերը, որը հնարավորություն էր ընձեռում ամորտիվացիայի գծային մեթոդի գործակցից ավելի շագը գործակցով մեթոդի կիրառումը: Փոփոխությունը ազդեցություն չի ունենա Բանկի գործունեության վրա, քանի որ բոլոր ոչ նյութական ակտիվները ամորտիվացվում են գծային մեթոդով:

ՀՀՍՍ 40 (Փոփոխություն) «Ներդրումային գույք» (և համապատասխան փոփոխություն ՀՀՍՍ 16) (ուժի մեջ է 2009թ.-ի հունվարի 1-ից):

Կառուցման կամ զարգացման ընթացքի մեջ գտնվող գույքը, որը հետագայում օգտագործվելու է որպես ներդրումային գույք, ներառվում է ՀՀՍՍ 40-ի շրջանակներում: Եթե կիրառվում է իրական արժեքի մեթոդը, ապա նմանատիպ գույքը չափվում է իրական արժեքով: Սակայն, եթե կառուցման ընթացքում գտնվող ներդրումային գույքի իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, ապա գույքը չափվում է սկզբնական արժեքով մինչև կառուցման ավարտի կամ իրական արժեքի արժանահավատ չափման հնարավորության ամսաթվերից առաջնայինի դեպքում: Բանկը կիրառի ՀՀՍՍ 40 (Փոփոխություն), սկսած 2009թ.-ի հունվարի 1-ից:

ՀՀՍՍ 20 (Փոփոխություն) «Պետական շնորհների հաշվառումը և պետական օգնության բացահայտումը» (ուժի մեջ է 2009թ.-ի հունվարի 1-ից):

Կառավարության կողմից շուկայական տոկոսադրույքից ցածր տոկոսադրույքով տրված վարկից օգուտը չափվում է ՀՀՍՍ 39-ի համաձայն հաշվեկշռային արժեքի և ՀՀՍՍ 20-ին համապատասխան հաշվառված օգուտով ստացված մուտքերի տարբերությամբ: Ընկերությունը կիրառի ՀՀՍՍ 20 (Փոփոխություն)-ը սկսած 2009թ. հունվարի 1-ից:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

4.1 Եկամուտների և ծախսերի ճանաչում

Եկամուտը ճանաչվում է այն դեպքում, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կիոսեն Բանկ և ստացված եկամուտը կարելի է արժանահավատորեն չափել: Ծախսը ճանաչվում է այն ժամանակ, եթե հավանական է, որ տնտեսական օգուտները կարտահոսեն Բանկից և ծախսը կարելի է արժանահավատորեն չափել: Ստորև ներկայացվող չափանիշները նույնպես պետք է հաշվի առնվեն մինչև եկամուտի ճանաչումը:

Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը բոլոր տոկոսաբեր ֆինանսական գործիքների համար, բացառությամբ առևտրային նպատակներով պահպող կամ ֆինանսական

արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող գործիքների, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվորյունում ճանաչվում են որպես «տոկոսային եկամուտ» և «տոկոսային ծախս»՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդ:

Եթե ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի հաշվեկշռային արժեքը նկազում է արժեգրկումից կորստների պատճառով, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել կիրառելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույթը՝ նոր հաշվեկշռային արժեքի նկատմամբ:

Կոմիսիոն և այլ եկամուտներ և ծախսեր

Վարկերի տրամադրման համար գանձվող վճարները (համապատասխան ծախսերի հետ միասին) հետաձգվում են՝ ճշգրտելով տվյալ վարկի արդյունավետ տոկոսադրույթը: Վարձավճարները, այլ եկամուտները և ծախսերը հինականում ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով ծառայությունների մատուցման ընթացքում: Ներդրումային պորտֆելի, այլ կառավարական և խորհրդատվական ծառայությունների գծով վճարները ճանաչվում են պայմանագրային պայմաններին համապատասխան:

Ծահարաժիններից եկամուտ

Եկամուտը ճանաչվում է, եթե Բանկի՝ վճարը ստանալու իրավունքը հաստատված է:

Զուտ առևտրային եկամուտ

Զուտ առևտրային եկամուտը ներառում է առևտրային նպատակներով պահպող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից իրացված և չիրացված եկամուտը և ծախսը, տոկոսներից, շահարաժիններից և արտարժութային տարբերություններից գոյացող բոլոր եկամուտները և ծախսերը: Զուտ առևտրային եկամուտը ներառում է նաև արտարժույթի առք ու վաճառքից գուտ եկամուտը կամ ծախսը:

4.2 Արտարժույթի փոխարկում

Արտարժույթով կատարված գործարքները վերահաշվարկվում են գործառնական արժույթով՝ գործարքի օրվա փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված առևտրային նպատակներով պահպող ակտիվների և պարտավորությունների փոխարկումից առաջացած օգուտը և վճար ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվորյան գուտ առևտրային եկամուտ հոդվածում, մինչդեռ ոչ առևտրային ակտիվների փոխարկումից գոյացող օգուտը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվորյան այլ եկամուտ կամ այլ ծախս հոդվածում: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթով կիրառելով հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային արժեքը իրական արժեքում փոփոխությունները վերլուծվում են փոխարժեքային տարբերությունների միջև, որոնք առաջանում են արժեքը արժեքը ամորտիզացված գումարների փոփոխության և արժեքը հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունների արդյունքում: Ամորտիզացված գումարում փոփոխությունների հետ կապված փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վճարում, իսկ հաշվեկշռային արժեքում այլ փոփոխությունները ճանաչվում են կապիտալում:

Պատմական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա փոխարժեքով: Իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային արտարժութային հոդվածները վերահաշվարկվում են իրական արժեքի որոշման օրվա փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածների, ինչպիսին են ֆինանսական

արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով պահպող բաժնետոմսերը, փոխարժեքային տարբերությունները, ներկայացվում են որպես իրական արժեքի փոփոխությունից շահույթի կամ վճարի մաս: Ոչ դրամային հոդվածների փոխարժեքային տարբերությունները, ինչպես օրինակ՝ վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնետոմսերը, ընդգրկվում են կապիտալում՝ վաճառքի համար մատչելի ներդրումների գծով վերագնահատման պահուստում:

Ցուրաքանչյուր գործառնության պայմանագրով նախատեսված փոխարժեքի և տվյալ գործառնության օրվա գործող փոխարժեքի տարբերությունից առաջացող օգուտը կամ վճար հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության գուտ առևտրային եկամուտ հոդվածի արտարժույթի առք ու վաճառքից գուտ եկամուտ տողում:

Բանկի կողմից ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

31 դեկտեմ. 2008 31 դեկտեմ. 2007

ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	306.73	304.22
ՀՀ դրամ/1 Եվրո	435.00	446.96

4.3 Հարկում

Ծահույթի գծով հաշվետու տարվա շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ծահութահարկը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն հարկերի, որոնց գծով գործառնությունների արդյունքները ճանաչվել են սեփական կապիտալում, ինչի դեպքում հարկերը նույնպես ճանաչվում են սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա համար հարկվող եկամուտից վճարվելիք հարկն է՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող հարկային դրույթներով, ինչպես նաև նախորդ տարիների համար վճարված հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են հաշվապահական հաշվեկշռի պարտավորությունների մերորդի համաձայն, որը հաշվի է առնում բոլոր ժամանակային տարբերությունները, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռությունների գումարների և հարկային նպատակներով հաշվարկվող գումարների միջև, բառառությամբ այն դեպքերի, երբ այդ տարբերություններն առաջացել են գուրգիլի նախնական ճանաչման ժամանակ կամ կազմակերպությունների միավորում շիանդիսացող գործառնություններից առաջացող ակտիվների կամ պարտավորությունների դեպքում և ինչը առաջացնան պահին չի ազդում ոչ հաշվապահական, և ոչ էլ հարկման նպատակով հաշվարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվ ճանաչվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ պահպանում առկա կինդի հարկման ենթակա շահույթ, որի հաշվին կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները: Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվարկվում են այն հարկային դրույթով, որը ենթադրվում է, որ կգործի ակտիվների իրացման և պարտավորությունների մարման ժամանակ՝ հիմնվելով տվյալ ժամանակաշրջանի կամ հաշվետու ժամանակաշրջանի փաստացի գործող դրույթների վրա:

Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ առաջանում են նաև այն ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են դրստր, ասոցիացված

կամ համատեղ կազմակերպություններում ներդրումներից, բացի այն դեպքերից, երբ ժամանակավոր տարրերությունների իրացման ժամկետները կառավարվում են մայր կազմակերպության կողմից, և հավանական է, որ դրանք մոտ ապագայում չեն իրացվի:

ՀՀ-ում բանկերն իրենց գործունեության ընթացքում վճարում են նաև այլ հարկեր: Այդ հարկերը ներառված են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության այլ ծախսերում:

4.4 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են կանխիկ դրամից, ՀՀ ԿԲ-ում պահպող միջոցներից և այլ բանկերում հաշիվներից, որոնք կարող են փոխարկվել կանխիկի կարճ ժամանակամիջոցում և չեն ենթարկվում արժեքի փոփոխման գգալի ռիսկի:

Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում են ամորտիզացված արժեքում:

4.5 Թանկարժեք մետաղներ

Թանկարժեք մետաղները իրենցից ներկայացնում են ուկու ստանդարտացված ձուլակտորներ և հաշվառվում են ՀՀ ԿԲ կողմից սահմանվող գներով, ինչը մոտավորապես դրանց իրական արժեքն է և հիմնված է Լոնդոնի Թանկարժեք Մետաղների բորսայի գնանշումների վրա:

Գների տատանումներն արտացոլվում են բանկարժեք մետաղներով գործառնություններից զուտ եկամուտ հոդվածում՝ այլ եկամուտներում կամ ծախսերում:

4.6 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Իր բնականոն գործունեության ընթացքում Բանկն օգտագործում է այլ բանկերում տարրեր ժամանակաշրջանների համար բացված ընթացիկ և ավանդային հաշիվներ: Բանկերին տրամադրված ֆիքսված ժամկետով վարկերն ու կանխավճարները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Ոչ ֆիքսված ժամկետներով միջոցներն ամորտիզացվում են Բանկի դեկավարության կողմից գնահատված ժամկետներում: Ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պահանջների գումարները նվազեցվում են արժեզրկումից պահուստների գումարներով:

4.7 Ածանցյալ ֆինանսական գործիքներ

Իր բնականոն գործունեության ընթացքում, արտարժույթի և կապիտալի շուկաներում, Բանկը հանդիս է զայխ որպես ածանցյալ գործիքներով պայմանագրերի կողմ, որոնք ներառում են ֆյուչերսներ, ֆորվարդներ, սվոպեր և օպցիոններ: Բոլոր ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրական նպատակներով պահպող և դրանց հաշվառումը իրականացվում է ֆինանսական գործիքների նախնական ճանաչման բաղաքականությունների համաձայն, այնուհետև դրանք վերաչափավում են իրական արժեքով: Իրական արժեքը որոշվում է շուկաներում գնանշումներով կամ այնախի մոդելների կիրառմամբ, որոնց հիմքում ընկած են շուկաների ընթացիկ վիճակների գնահատումները և բազային գործիքների պայմանագրային գները և այլ գործոններ: Դրական իրական արժեքը ունեցող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվ, իսկ բացասական իրական արժեքը ածանցյալ գործիքները՝ որպես պարտավորություն: Նշված գործառնություններից արդյունքները հաշվառվում են որպես առևտրային նպատակներով պահպող ակտիվներից կամ արտարժութային գործառնություններից շահույթ կամ վնաս, կախված ածանցյալ գործիքների բնույթից:

Այլ ֆինանսական գործիքների բաղադրիչ հանդիսացող ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ, եթե դրանց գծով ոխսկերը և առանձնահատկությունները խիստ կապված չեն հիմնական պայմանագրի ոխսկերից և առանձնահատկություններից, և հիմնական պայմանագրիր չի հաշվառվում իրական արժեքով՝ ճշգրտվող ֆինանսական արդյունքներով: Ներառված ածանցյալ գործիքը հանդիսանում է բարդ ֆինանսական գործիքի բաղադրիչ, որը ներառում է ինչպես հիմնական բաղադրիչը, այնպես էլ ածանցյալ բաղադրիչը, ինչի արդյունքում որոշ դրամական հոսքեր հիմնական գործիքի և ինքնուրույն ածանցյալ գործիքի փոփոխվում են նույն ձևով:

4.8 Ֆինանսական գործիքներ

Բանկը ֆինանսական ակտիվները և պարտավորություններն իր հաշվեկշռում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական բնույթ կրող առք ու վաճառքների դեպքում դրանք ձևակերպվում են գործարքի օրվա ամսաթվով: Սովորական բնույթ կրող ձեռք բերումների դեպքում, երբ ֆինանսական գործիքը հետագայում պետք է չափվի իրական արժեքով, պայմանագրի օրվա և գործարքի օրվա միջև ընկած ժամանակամիջոցում այն հաշվառվում է նույն սմզբունքով, ինչ որ ձեռք բերված գործիքների դեպքում:

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները սկզբնական ճանաչման ժամանակ չափվում են սկզբնական արժեքով, գումարած գործարքի հետ կապված ցանկացած ժամանակումները, բացի ֆինանսական արդյունքներով՝ ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների:

Սկզբնական ճանաչումից հետո բոլոր ֆինանսական պարտավորությունները, բացի ֆինանսական արդյունքներով՝ ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների (ներառված նաև առևտրային նպատակներով պահվող գործիքները), հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունվետ տոկոսադրույթի մեթոդը: Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական արդյունքներով՝ ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով:

Բանկի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների: Ֆինանսական արդյունքներով՝ ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վարկեր և դերիտորական պարտքեր, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ: Ներդրումների նման դասակարգումը կատարվում է դրանց ձեռքբերման պահին՝ Բանկի դեկավարության կողմից սահմանված գնահատումների հիման վրա հաշվի առնելով ձեռքբերման նպատակները: Ակտիվների հետագա վերադասակարգումը կատարվում է անհրաժեշտության և հնարավորության դեպքում՝ յուրաքանչյուր ֆինանսական տարվա պարտից հետո:

Ֆինանսական արդյունքներով՝ ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Այս կատեգորիայում հաշվառվում են առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները և ֆինանսական արդյունքներով՝ ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները: Ֆինանսական ակտիվը հաշվառվում է այս կատեգորիայում, եթե այն ձեռք է բերվում կարճ ժամկետում վաճառքի նպատակով կամ եթե այդպես է որոշվում դեկավարության կողմից նշված ակտիվի ձեռք բերման պահին:

Ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները դասակարգվում են որպես ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, երբ.

- Այդպես վարվելը զգայիրեն կնվազեցնի չափման անհամապատասխանությունները, որոնք կառաջանային, եթե կապված ածանցյալ գործիքները համարվեին առևտրական նպատակներով պահպող, իսկ հիմք հանդիսացող ֆինանսական գործիքները հաշվառվեին ամորտիզացված գումարով, ինչպես վարկերը կամ հաճախորդներին և բանկերին տրվող կանխավճարները, կամ պարտքային արժեքորերի տեսքով բողարկված արժեքորերը:
- Որոշ ներդրումներ, ինչպես օրինակ կապիտալի գործիքներում կատարված ներդրումները, որոնք փաստաթղթավորված ոիսկերի կառավարման կամ ներդրումային քաղաքականության համաձայն հաշվառվում են իրական արժեքով և կառավարչական անձնակազմին հաղորդվում են այդ արժեքով, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող, և
- Ֆինանսական գործիքները, ինչպես պարտքային արժեքորերը, որոնք պարունակում են մեկ կամ ավելի բաղադրիչ ածանցյալ գործիքներ, որոնք էականորեն ազդում են դրամական հոսքերի վրա, համարվում են ֆինանսական արդյունքներով ճշգրտվող՝ իրական արժեքով հաշվառվող:

Ածանցյալ գործիքները դասակարգվում են որպես առևտրային նպատակներով պահպող, քայի այն դեպքերից, երբ դրանք օգտագործվում են հեջափորման նպատակով: Առևտրային նպատակներով պահպող ակտիվներից շահույթը և վճար արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Մինչև մարման ժամկետը պահպող արժեքորեր

Ֆիքսված մարման ժամկետով արժեքորերը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահպող, երբ Բանկը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել այդ ներդրումները մինչև դրանց մարման ժամկետի լրանալը: Եթե Բանկի կողմից իրականացվում է մարման ժամկետին ոչ մոտ ակտիվների էական գումարի վաճառք, ապա ամբողջ դասը վերադասակարգվում է որպես վաճառքի համար մատչելի: Մինչև մարման ժամկետը պահպող ներդրումները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մերողը՝ հանած դրանց գծով արժեզրկումից պահուստները:

Վարկեր և դեբիտորական պարտքեր

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ֆինանսական ակտիվներն են, որոնք ստեղծվում են Բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին դրամ տրամադրելու միջոցով՝ առանց պարտքը վաճառելու մտադրության:

Ֆիքսված ժամկետներով տրամադրված վարկերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքից ծախսումները: Եթե տրամադրված գումարների իրական արժեքը տարբերվում է վարկի իրական արժեքից, օրինակ եթե վարկը տրամադրվում է շուկայականից ցածր տոկոսադրույթով, տրամադրված գումարի և վարկի իրական արժեքների տարբերությունը վարկի սկզբնական ճանաչման ժամանակ ձևակերպվում է որպես ծախս շուկայականից ցածր դրույթներով ակտիվների տեղաբաշխումից՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Այնուհետև վարկերն ու փոխատվությունները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մերողը: Ֆիքսված մարման ժամկետը շունեցող վարկերն ու փոխատվությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ ելնելով մարման ենթադրվող ժամկետներից: Հաճախորդներին տրված վարկերի ու փոխատվությունների գումարները նվազեցվում են դրանց գծով արժեզրկումից պահուստների գումարները:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ներդրումներ

Վաճառքի համար մատչելի ներդրումները պարտքային, ինչպես նաև կապիտալի գործիքներում կատարված այն ներդրումներն են, որոնք Բանկը մտադիր է պահել անորոշ ժամկետով, և որոնք կարող են վաճառվել իրացվելիության կարիքների բավարարման համար, ինչպես նաև տոկոսադրույթներում, փոխարժեքներում կամ բաժնետոմսերի գներում փոփոխությունների դեպքում։ Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները նախնական ճանաչումից հետո հաշվառվում են իրական արժեքով։ Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից առաջացած շահույթն ու վճար վերագրվում է սեփական կապիտալին մինչև ֆինանսական ակտիվի օտարումը կամ արժեզրկումը, որի դեպքում կապիտալում ճանաչված շահույթը կամ վճար վերածնակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում։ Ամեն դեպքում, տոկոսները հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույթի մերողով՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում։ Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիքների գծով շահաբաժնները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գրանցվում են այն ժամանակ, երբ Բանկը իրավում է ձեռք բերում ստանալու այդ շահաբաժնները։

Ակտիվ ֆինանսական շուկաներում գործող ֆինանսական ակտիվի իրական արժեքը հաշվետու ամսաթվին բորսային փակման պահին այդ ակտիվի գծով գնանշվող գինն է։ Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, ապա գործիքի իրական արժեքը որոշվում է գնային մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով։ Հակառակ դեպքում ներդրումները հաշվառվում են ինքնարժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները։

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով Բանկն իրականացնում է արժեզրկման գնահատում ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական ակտիվների խմբի համար։

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը արժեզրկվում է և արժեզրկումից կորուստը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա օբյեկտիվ վկայություն արժեզրկման մասին՝ որպես ակտիվի նախնական ճանաչումից հետո կատարված մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և եթե այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվի կամ ակտիվների խմբի ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել։

Արժեզրկումից կորուստի օբյեկտիվ վկայության գոյությունը որոշվում է որոշ չափանիշներով, որոնք վկայում են, որ վարկառուն կամ վարկառուների խումբն ունեն զգայի ֆինանսական դժվարություններ (օրինակ՝ կապիտալի նորմատիվ, զուտ եկամտի և վաճառքների հարաբերակցություն), առկա են տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների, վարկային համաձայության կամ պայմանների խախտումներ, գրավի արժեքի նվազում, հավանականություն, որ կինը սնանակացուն կամ այլ ֆինանսական վերակազմակերպում և կա տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափելի նվազման վերաբերյալ՝ կապված տնտեսական պայմանների փոփոխություններով, որոնք ազդում են վարկառուի և շվճարումների վրա։

Բանկը սկզբից գնահատում է արժեզրկման օբյեկտիվ պայմանների գոյությունը անհատական գնահատման արդյունքում այն ակտիվների համար, որոնք անհատապես էական են և հետո անհատական կամ խմբային գնահատումների արդյունքում այն ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն։ Անհատական

գնահատման արդյունքում արժեզրկման օբյեկտիվ գոյությունը հաստատելուց կամ Ժխտելուց հետո ակտիվները դասակարգվում են վարկային ռիսկի նմանատիպ քննություննեցող խմբերում խմբային գնահատում իրականացնելու նպատակով: Այն ակտիվները, որոնց գծով անհատական գնահատման արդյունքում ձևավորվել են արժեզրկումից պահուստներ, չեն ներառվում վերոհիշյալ խմբերում:

Երբ առկա է վկայություն ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի արժեզրկման վերաբերյալ, արժեզրկման պահուստի գումարը որոշվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և այդ ֆինանսական գործիքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված ապագա ծախսերի) ներկա արժեքի միջև տարրերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, արժեզրկումից ծախսը արտացոլվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե վարկը կամ մինչև մարման ժամկետը պահպան ներդրումն ունի փոփոխական տոկոսադրույթ, ցանկացած արժեզրկումից ծախս չափելու համար զեղչման դրույթը պայմանագրով որոշված ընթացիկ արդյունավետ տոկոսադրույթն է: Բանկը կարող է արժեզրկումը չափել գործիքի իրական արժեքի հիման վրա՝ օգտագործելով տեսանելի շուկայական գինը:

Ապահովված ֆինանսական ակտիվների դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքը ներառում է գրավների իրացումից փոփոխատուցվող գումարները, հանած գրավի ձեռքբերման և իրացման ծախսերը, անկախ նրանից, թե գրավը կփոխանցվի Բանկին, թե ոչ:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով, ֆինանսական ակտիվները խմբավորվում են Բանկի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում վարկային ռիսկի բնութագրիչները, ինչպես՝ ակտիվի տեսակը, արդյուաբերական ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետանց կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկումը խմբային է գնահատված, որոշվում են խմբում գտնվող ակտիվների պայմանագրային դրամական հոսքերի և նմանատիպ ակտիվների պատմական ծախսերի պրակտիկայի հիման վրա: Վերջինս ճշգրտվում է ընթացիկ տեսանելի տեղեկատվությամբ, որպեսզի արտացոլվեն ներկա պայմանները, որոնք չեն ազդել այն ժամանակահատվածում, որի վրա հիմնված է պատմական ծախսերի պրակտիկան, և պատմական ժամանակաշրջանում ներկայում գոյություն չունեցող պայմանների հետևաները չեզորացնելու նպատակով:

Ակտիվների խմբերի ապագա դրամական հոսքերում փոփոխությունների գնահատականը պետք է արտացոլի և համապատասխան լինի դրանց հետ կապված տեսանելի տվյալների ժամանակաշրջանից ժամանակաշրջան փոփոխությունների հետ (օրինակ՝ փոփոխություններ գործազրկության դրույթներում, գույքի գնի, վճարումների կարգավիճակի կամ խմբում կորուստների հավանականությունը մատնանշող այլ գործոնների և կորուստների ծավալների մեջ): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մերողուղիքան և վարկածները պարբերաբար վերանայվում են Բանկի կողմից՝ կորուստների իրական և գնահատված արժեքների միջև տարրերությունները նվազեցնելու համար:

Վարկերը համապատասխան պահուստների հետ միասին դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոփոխանցվել Բանկին: Եթե հաջորդող տարում, գնահատված արժեզրկման ծախսը ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո

կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ժախսը ավելացվում կամ նվազեցվում է պահուստի գումարը ճշտելով: Եթե ապագա դրույթումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է պահուստի հաշվին:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Եթե վաճառքի համար մատչելի ակտիվն արժեզրկվում է, ապա նրա արժեքի (նվազեցված մարումների և ամորտիզացիայի գումարներով) և ընթացիկ իրական արժեքի տարբերությունը, բացառությամբ նախկինում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված արժեզրկումից գումարների, կապիտալից վերաձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վաճառքի համար մատչելի կապիտալի գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձում ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի կատարվում: Վաճառքի համար մատչելի պարտքային գործիք հանդիսացող ներդրումների գծով արժեզրկումից կորուստների հակադարձումը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե ակտիվի իրական արժեքի բարձրացումը օբյետիվորեն կարելի է համարել հետագա իրադարձությունների արդյունք, որոնք կատարվել են կորուստը ֆինանսական արդյունքներով ճանաչելուց հետո:

4.10 Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապահովանաչում Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մի մասը, կամ ֆինանսական ակտիվների խմբի մի մասը) ապահովվում է, եթե՝

- վերանում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը,
- Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամողջությամբ և ժամանակին փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն,
- և Բանկը կամ (ա) փոխանցում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, այլ փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Եթե Բանկը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և չի փոխանցում, և չի պահպանում ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա ակտիվը հաշվառվում Բանկի շարունակվող մասնակցության համապատասխան ֆինանսական ակտիվում: Եթե շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, ապա այդպիսի մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ ակտիվի հաշվեկշռային արժեք կամ Բանկի կողմից փոխառուցվելիք առավելագույն գումար:

Եթե շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի դրույթրված վաճառքի և/կամ զննան օպցիոնի ձև (ներառյալ դրամային և նման պայմաններով օպցիոնները), մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Բանկը կարող է հետ գնել փոխանցվող ակտիվը, բացառությամբ իրական արժեքով գնահատված դրույթրված վաճառքի օպցիոնի (ներառյալ դրամային և նման պայմաններով օպչիոնները), եթե շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցվող ակտիվի իրական արժեքը կամ օպչիոնի կատարման գինը:

Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունն ապահանաչվում է, եթե այն նարգում է, չեղյալ է համարվում կամ լրացել է դրա ուժի մեջ մնալու ժամկետը:

Փոխառուի փոխառուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է իին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարքի ապահանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային հաշվի հետ ձևակերպվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

4.11 Ոեպո և հակադարձ ոեպո համաձայնագրեր

Հետզնման պայմանով արժեթղթերի վաճառքի գործառնությունները («ոեպո») դիտարկվում են որպես ապահովված ֆինանսական գործառնություններ: Հետզնման պայմանով վաճառված արժեթղթերը շարունակվում են հաշվառվել հաշվեկշռում, և այն դեպքում, եթե գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետզնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր» և ներկայացվում են որպես առանձին հաշվեկշռային հոդված: Համապատասխան պարտավորությունն արտացոլվում է ֆինանսական կազմակերպությունների կամ հաճախորդների նկատմամբ հաշիվներում:

Հետվաճառքի պայմանով գնված արժեթղթերը («հակադարձ ոեպո»), չեն ճանաչվում հաշվապահական հաշվեկշռում, իսկ վճարված գումարները հաշվառվում են որպես պահանջներ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կամ հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ:

Արժեթղթերի գնման և վաճառքից առաջացած եկամուտը կամ ծախար իրենից ներկայացնում է տոկոսային եկամուտ կամ ծախս, որոնք հաշվեգրվում են հետզնման պայմանագրերի գործողության ժամկետների ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

4.12 Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերով գործարքները հիմնականում ապահովվում են արժեթղթերով կամ կանխիկ դրամով: Արժեթղթերի փոխանցումը մյուս կողմին արտացոլվում է հաշվեկշռում, միայն եթե փոխանցվում են նաև ռիսկերը և օգուտները կապված սեփականության իրավունքի փոխանցման հետ: Վճարված կամ որպես գրավ ստացված կանխիկը գրանցվում է որպես ակտիվ կամ պարտավորություն:

Զեռքբերված արժեթղթերը չեն ճանաչվում հաշվեկշռում մինչև դրանց օտարումը երրորդ կողմին, որի դեպքում նշված արժեթղթերի վերադարձման գծով պարտավորությունը ճանաչվում է իրական արժեքով որպես առևտրական նպատակներով պարտավորություն, իսկ գնման և վաճառքի տարբերությունը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության «Զուտ առևտրային եկամուտ» հոդվածում:

4.13 Վարձակալություն

Գործառնական վարձակալություն - Բանկը որպես վարձակալ

Ակտիվների վարձակալությունը, որի դեպքում ակտիվի սեփականության հետ կապված բոլոր ռիսկերն ու օգուտները պահպանվում են վարձատուի մոտ, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Գործառնական վարձակալության շրջանակներում վարձավճարները ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին

հաշվետվությունում գծային հիմունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում են գործառնական ծախսերում:

4.14 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքի և կուտակված մաշվածության տարբերությամբ: Երբ ակտիվի հաշվեկշռային արժեքը ավելի մեծ է նրա գնահատված փոխհատուցվող գումարից ոչ ժամանակավոր հանգանակների պատճառով, այն անմիջապես նվազեցվում է մինչև այդ փոխհատուցվող գումարը:

Մաշվածությունը հաշվարկվում է գծային մերորդ ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, կիրառելով հետևյալ տարեկան դրույքաչափերը՝

	Օգտակար ծառայության ժամկետ (տարիներ)	Տոկոսադրույք (%)
Համակարգիչներ և կապի միջոցներ	4	25
Տրանսպորտային միջոցներ	5	20
Գույք և գրասենյակային միջոցներ	5	20
Այլ հիմնական միջոցներ	3-5	33.33-20

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին: Կապիտալ բնույթի նորոգման ծախսումները ավելացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ հավանական է, որ դրանց շնորհիվ ապագա տնտեսական օգուտները՝ ավելի շատ, քան ակնկալվում էր առկա ակտիվի նորմատիվային ցուցանիշների սկզբնական գնահատումից, կհոսեն դեպի կազմակերպություն: Այս ծախսումների մաշվածությունը հաշվարկվում է համապատասխան ակտիվի օգտակար ծառայության մնացորդային ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցի իրացումից առաջացած օգուտ կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և հաշվառվում է գործառնական շահույթում:

4.15 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները բաղկացած են համակարգչային ծրագրից և արտոնագրերից:

Առանձին ձեռք բերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Նախնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ինքնարժեքով՝ նվազեցնելով կուտակված ամորտիզացիան կամ արժեզրկումից կորուստները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունների ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվներն ամորտիզացվում են օգտակար ծառայության ընթացքում՝ 10 տարվա ընթացում և գնահատվում են արժեզրկման առումով, երբ առկա են արժեզրկման հատկանիշներ: Ամորտիզացիայի հաշվառման մերողները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում:

Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, սակայն յուրաքանչյուր տարի գնահատվում են արժեզրկման առումով՝ անհատապես կամ առանձին դրամաստեղծ միավորի համար: Անորոշ օգտակար ծառայությունների ժամկետներ ունեցող ոչ նյութական ակտիվները յուրաքանչյուր տարի հսկվում են հիմնավորելու համար նրանց հաշվառման շարունակականությունը նշված դասում:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը հաշվառվում են որպես ծախս դրանց կատարման ժամանակ:

4.16 Ներգրաված միջոցներ

Ներգրաված միջոցները, որոնք ներառում են այլ ֆինանսական կազմակերպությունների և հաճախորդների հաշիվները, սկզբնապես ճանաչվում են ստացված միջոցների իրական արժեքով՝ հանած գործառնությունների գծով ուղղակի ծախսերը: Սկզբնական ճանաչումից հետո ներգրավված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Եկամուտները և ծախսերը գրանցվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ինչպես պարտավորությունների ապահանաչման ժամանակ, այնպես էլ ամորտիզացիայի ընթացքում:

4.17 Կենսաթոշակներ

Բանկում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ծնավորվում: Նշված համակարգին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

4.18 Ֆինանսական երաշխիքներ

Ֆինանսական երաշխիքների պայմանագրերը այն պայմանագրերն են, որոնք պահանջում են, որ երաշխիքը տրամադրողը փոխառությունը երաշխիքը ստացողին կոնկրետ պարտապանի կողմից պարտքային գործիքի ժամկետներին համաձայն վճարումները ժամանակին չկատարելու պատճառով վերջինիս կողմից կրած վնասների դիմաց: Նման ֆինանսական երաշխիքները տրամադրվում են բանկերին, ֆինանսական և այլ կազմակերպություններին հաճախորդների վարկերը, օվերդրաֆտները և այլ բանկանյին գործիքները ապահովելու նպատակով:

Ֆինանսական երաշխիքները ֆինանսական հաշվետվություններում սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով «Այլ պարտավորություններ»-ում՝ որպես կոմիսիոն վճար: Սկզբնական ճանաչումից հետո Բանկը յուրաքանչյուր երաշխավորության տակ պարտավորությունը չափում է ամորտիզացված վճարից և երշխավորության արդյունքում առաջացած ցանկացած ֆինանսական պարտավորություն լուծելու համար անհրաժեշտ ելքերի լավագույն գնահատումից առավելագույնով:

4.19 Բաժնետիրական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես կապիտալ: Նոր բաժնետոմսերի թողարկմանը, բացի կազմակերպությունների միավորնան դեպքում թողարկվող բաժնետոմսերի, վերաբերող ուղղակի ծախսերը նվազեցվում են կապիտալի աճից: Եթե թողարկման արդյունքում ստացված գումարների իրական արժեքը գերազանցում է բաժնետոմսերի անվանական արժեքը, տարբերությունը հաշվառվում է որպես հավելավճար:

Գնված սեփական բաժնետոմսեր

Եթե Բանկը գնում է Բանկի բաժնետոմսերը, սեփական կապիտալը նվազեցվում է վճարված գումարի չափով, ներառյալ գործառնությանը բնորոշ բոլոր ծախսերը՝ նվազեցված հարկերով, մինչև գործարքի չեղյալ համարվելը կամ վերաբողարկումը: Եթե գնված բաժնետոմսերը վաճառվում են երրորդ կողմին կամ վերաբողարկում են,

ստացված գումարները ներառվում են կապիտալում: Գնված բաժնետոմսերը հաշվառվում են միջին կշռված արժեքով:

Հահարաժիններ

Հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով շահարաժինները դուրս են գրվում կապիտալից և ճանաչվում են որպես պարտավորություն, միայն եթե դրանք հաստատվում են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվով կամ մինչև այդ: Մինչև հաշվապահական հաշվեկշռի ամսաթիվը հայտարարված կամ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց մինչև ֆինանսական հաշվետվությունների հրապարակման ամսաթիվը հայտարարված կամ հաստատված շահարաժինները բացահայտվում են:

4.20 Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, եկամուտներն ու ծախսերը հաշվեկշռում ներկայացվում են հաշվանցված, եթե գոյություն ունի օրենսդրությունը հաստատված իրավունք իրականացնելու հաշվառված գումարների հաշվանցում, ինչպես նաև մտադրությունը իրականացնելու հաշվանցում կամ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը:

5 Կարևորագույն հաշվապահական գնահատումներ և դատողություններ

ՖՀՍՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Բանկի ղեկավարությունը կատարի կանորագյուն հաշվապահական գնահատումներ, դատողություններ և ենթադրություններ, որոնք ազդեցություն են թողնում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրույամք ակտիվների և պարտավորությունների ներկայացվող գումարների, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների և ծախսերի վրա: Գնահատումները և դրանց հետ կապված ենթադրությունները, իմնավորությունները, պատմական փորձի և այլ գործուների վրա, որոնք իմնավորված են տվյալ պայմաններում, իմք են հանդիսանում դատողություններ անելու այն ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ, որոնց արժեքը հնարավոր չէ որոշել այլ վստահելի աղբյուրներից: Ամեն դեպքում, չնայած գնահատումները իմնավոր են ղեկավարության կողմից ընթացիկ իրադարձությունների լավագույն պատկերացումների վրա, փաստացի արդյունքները վերջին հաշվով կարող են տարբերվել կատարված գնահատումներից:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների առումով նշանակալից դատողությունները և գնահատումները ներկայացվում են ստորև:

Ներդրումային արժեթղթերի դասակարգում

Բանկի ներդրումային արժեթղթերը ներառում են ՀՀ ԿԲ, պետական և ոչ պետական պարտատոմսերը, ոչ պետական բաժնետոմսերը: Ակզենտական ճանաչման ժամանակ Բանկը դասակարգում է արժեթղթերը որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, որոնց իրական արժեքի ճշգրտումն իրականացվում է կապիտալում:

Փոխառակացված կողմերի հետ ողջառնություններ

Բանկն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործառնություններ փոխառակացված կողմերի հետ: Նշված գործառնությունները իմնավանում իրականացվում են շուկայական պայմաններով: Գործող շուկայի բացակայության դեպքում Բանկը կատարում է դատողություններ գործառնությունների շուկայական կամ ոչ շուկայական բնույթի վերաբերյալ: Դատողությունները իմնավոր են այլ հաճախորդների հետ նմանատիպ գործառնությունների, ինչպես նաև արդյունավետ դրույթների վերլուծությունների վրա:

Վարկերի և այլ փոխատվությունների □ ծով արժեզրկումից պահուստներ
 Բանկը գնահատում է խնդրահարույց վարկերը և փոխատվությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի համար՝ պարզելու համար, թե արդյոք անհրաժեշտ է արժեզրկման պահուստ ձևավորել ֆինանսական արդյունքների նախնական հաշվետվությունում։ Մասնավորապես, դեկավարության դատողությունն անհրաժեշտ է ապագա դրամական հոսքերի գումարը և պարբերականությունը գնահատելու համար, եթե անհրաժեշտ է պահանջվող պահուստի չափը որոշել։ Նման գնահատումները հիմնված են որոշ գործոնների շուրջ ենթադրությունների վրա և ներկա արդյունքները կարող են տարբեր լինել՝ հանգեցնելով պահուստում հետագա փոփոխությունների։

Նշանակալի վարկերի և փոխատվությունների համար անհատական ստեղծված հատուկ պահուստներից բացի, Բանկը նաև ստեղծում է արժեզրկման խմբային պահուստներ, այն ոիսկերի գծով, որոնք չնայած որ անհատապես չեն գնահատվել, սակայն պարունակում են չվճարման ավելի մեծ ռիսկ, քան սկզբնապես որոշվել էր։ Սա հաշվի է առնում այնպիսի գործոնների ազդեցությունը, ինչպիսիք են վատրարացումը երկրի ռիսկում, արդյունաբերության մեջ և տեխնոլոգիական հնացումը, ինչպես նաև բացահայտված կառուցվածքային թուլությունները կամ դրամական հոսքերի նվազումները։

Դարկային օրենսդրություն

ՀՀ հարկային օրենսդրությունը ենթակա է տարակարծիք մեկնարանությունների։ Տես 27 ծանոթագրությունը։

Կապիտալի □ ործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումների արժեզրկում

Բանկը համարում է կապիտալի գործիք հանդիսացող վաճառքի համար մատչելի ներդրումն արժեզրկված, եթե դրա իրական արժեքի նվազումը էական է կամ կրում է երկարատև բնույթ։ Որոշելու համար էական է կամ երկարատև նվազումը՝ Բանկը կատարում է որոշակի դատողություններ։ Այդ դատողությունները կատարելիս, այլ գործոնների հետ մեկտեղ, Բանկը հաշվի է առնում նաև բաժնետոմսների գնի փոփոխականությունը։ Բացի դրանից, արժեզրկումը հնարավոր է, եթե առկա են ապացույցներ, որ վատացել է ֆինանսական վիճակը տվյալ կազմակերպության, արդյունաբերության կամ ճյուղի, որտեղ կատարվել է ներդրումը, կատարվել են փոփոխություններ տեխնոլոգիաներում և գործառնական կամ ֆինանսական դրամական հոսքերում։

6 Տոկոսային և նմանատիպ եկամուտներ և ծախսեր

Տարբերակ ՀՀ դրամ	2008	2007
Վարկեր և փոխատվություններ հաճախորդներին	754,162	422,425
Վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթեր	656,383	278,279
Ֆինանսական կազմակերպությունների հաշվեմեր	136,259	66,462
Դարկադր ռեպո գործառնություններ	46,307	31,120
Ֆակտորինգ	55,552	7,467
Այլ տոկոսային եկամուտներ	3,815	1,620
Ընդամենը տոկոսային և նմանատիպ եկամուտներ	1,652,478	807,373

Հազար ԴՐ դրամ	2008	2007
Հաճախորդների հաշիվներ	431,375	155,593
Ֆինանսական կազմակերպությունների հաշիվներ	110,380	48,120
Ուղղություններ	359,965	75,972
Ընդամենը տոկոսային և նմանատիպ ծախսեր	901,720	279,685

7 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ և ծախսեր

Հազար ԴՐ դրամ	2008	2007
Դրամարկղային գործառնություններ	20,287	16,999
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	20,109	12,254
Բրոքերային գործառնություններ	12,014	4,275
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	3,006	2,526
Այլ վճարներ և կոմիսիոն եկամուտներ	2,407	1,500
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտներ	57,823	37,554

Հազար ԴՐ դրամ	2008	2007
Հաշվարկային գործառնություններ/փոխանցումներ	7,362	5,969
Արտարժույթի փոխարկման գործառնություններ	1,546	5,422
Երաշխիքներ և ակրեդիտիվներ	-	276
Այլ ծախսեր	2,643	1,186
Ընդամենը կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսեր	11,551	12,853

8 Զուտ առևտրային եկամուտ

Հազար ԴՐ դրամ	2008	2007
Արտարժույթի առք ու վաճառքից զուտ եկամուտ	113,610	43,692
Ածանցյալ գործիքներից զուտ վճառք	(2,020)	(8,328)
Ընդամենը զուտ առևտրային եկամուտ	111,590	35,364

9 Այլ եկամուտներ

Հազար ԴՐ դրամ	2008	2007
Ստացված տույժեր և տուգանքներ	4,790	1,538
Թանգարժեք մետաղներով գործառնություններից եկամուտներ	24,344	49,809
Ոչ առևտրային ակտիվների արտարժույթի վերագնահատումից զուտ եկամուտ	-	22,818
Շահարաժիններից եկամուտ	435	245
Բրոքերային ծառայություններից եկամուտ	12,750	-
Այլ եկամուտ	962	3,941
Ընդամենը այլ եկամուտներ	43,281	78,351

10 Վարկային կորուստների արժեգրկման ծախս/(հակադարձում)

Հազար ՀՀ դրամ

2008

2007

Վարկեր և փոխառվություններ հաճախորդներին (ծանրագործում 16)	50,389	(8,793)
--	---------------	---------

Ընդամենը վարկային կորուստների արժեգրկման ծախսեր	50,389	(8,793)
---	---------------	---------

11 Անձնակազմի գծով ծախսեր

Հազար ՀՀ դրամ

2008

2007

Աշխատավարձ Սոցիալական ապահովագրության վճարներ	374,397	245,444
	30,865	21,617
Ընդամենը անձնակազմի գծով ծախսեր	405,262	267,061

12 Այլ ծախսեր

Հազար ՀՀ դրամ

2008

2007

Նյութական ակտիվների վերամորոգման և սպասարկման ծախսեր	6,695	7,498
Գովազդի ծախսեր	4,164	2,463
Գործուղման ծախսեր	10,660	10,152
Կապի և հաղորդակցման միջոցների գծով ծախսեր	35,449	29,743
Վարձակալության գծով ծախսեր	36,000	36,023
Հարկեր, (բացառությամբ շահութահարկի) և տուրքեր	9,836	11,357
Խորհրդատվական և այլ ծառայությունների գծով ծախսեր	10,200	5,842
Անվտանգության գծով ծախսեր	2,333	4,091
Հիմնական միջոցների օտարումից կորուստներ	96	20
Ներկայացուցչականի ծախսեր	19,334	10,552
Գրասենյակային ծախսեր	7,865	7,167
Վճարված տուգանքներ	-	557
Ոչ առևտրային ակտիվների արտաքության վերագնահատումից զուտ վնաս	6,100	-
Այլ ծախսեր	9,851	9,611
Ընդամենը այլ ծախսեր	158,583	135,076

13 Չափութահարկի գծով ծախս

Հազար ՀՀ դրամ

2008

2007

Ընթացիկ հարկ	71,093	68,614
Նախորդ տարիների շափութահարկի ծցգրտում	3,931	384
Հետաձգված հարկ	(156)	6,721
Ընդամենը շափութահարկի գծով ծախս	74,868	75,719

Հայաստանի Հանրապետությունում շափութահարկի դրույքաչափը կազմում է 20% (2007թ.՝ 20%): ՀՀ հարկային օրենսդրության և ՖՀՍՍ-ի միջև եղած տարբերությունը մի շարք ակտիվների և պարտավորությունների գծով առաջացնում է ժամանակավոր տարբերություններ ֆինանսական հաշվետվությունների կազման նպատակներով դրանց հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով հաշվեկշռային արժեքների միջև: Հետաձգված շափութահարկի գումարը հաշվարկվում է 20% հիմնական դրույքաչափը

Կիրառելով: Ստորև ներկայացվում է շահութահարկի գծով ծախսի և հաշվապահական շահույթի միջև փոխկապակցվածությունը.

Հազար ԴՐ դրամ	2008	Արդյունավետ դրույքաչափ (%)	2007	Արդյունավետ դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	354,631		409,868	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	70,926	20	81,974	20
Զհարկվող Եկամուտներ	(87)	-	(49)	-
Զնվագեցվող ծախսեր	1,606	1	4,091	1
(Դրական)/Բացասական փոխարժեքային տարրերություն	1,220	-	(8,481)	(2)
Այլ	1,203	-	(1,816)	-
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	74,868	21	75,719	19

Ժամանակավոր տարրերությունների գծով հետաձգած հարկի հաշվարկ.

Հազար ԴՐ դրամ	2007	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	2008
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	2,066	(61)	-	2,005
Առևտրային ներդրումների իրական արժեքների ճշգրտում	-	-	-	-
Վաճառքի համար մատչելի արժեքների իրական արժեքի ճշգրտում	47,384	-	(17,452)	29,932
Համախառն հետաձգված հարկային ակտիվ	49,450	(61)	(17,452)	31,937
Արժեգրկումից կորուստներ և այլ պահուստների գծով ծախսեր	(6,970)	217	-	(6,753)
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(6,970)	217	-	(6,753)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	42,480	156	(17,452)	25,184

Հազար ԴՐ դրամ	2006	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալում ճանաչված	2007
Կուտակված ծախսեր և այլ պարտավորություններ	797	1,269	-	2,066
Առևտրային ներդրումների իրական արժեքների ճշգրտում	1,522	(1,522)	-	-
Կուտակված հարկային վճառ	-	-	47,384	47,384
Համախառն հետաձգված հարկային ակտիվ	2,319	(253)	47,384	49,450
Արժեգրկումից կորուստներ և այլ պահուստների գծով ծախսեր	(502)	(6,468)	-	(6,970)
Վաճառքի համար մատչելի արժեքների իրական արժեքի ճշգրտում	(3,224)	-	3,224	-
Ընդամենը հետաձգված հարկային պարտավորություն	(3,726)	(6,468)	3,224	(6,970)
Զուտ հետաձգված հարկային ակտիվ/(պարտավորություն)	(1,407)	(6,721)	50,608	42,480

Հազար ՀՅ դրամ	2007	Ֆինանսական արդյունքներով ճանաչված	Սեփական կապիտալով ճանաչված	2008
---------------	------	---	----------------------------------	------

14 Կանխիկ դրամական միջոցներ, դրանց համարժեքներ և մնացորդներ ՀՅ ԿԲ-ում

Հազար ՀՅ դրամ	2008	2007
Կանխիկ դրամական միջոցներ	150,732	109,802
Թղթակցային հաշիվներ ՀՅ ԿԲ-ում	2,314,742	852,993
Ընդամենը դրամական միջոցներ և մնացորդներ ՀՅ ԿԲ-ում	2,465,474	962,795
Դրամական միջոցների հոսքերով ներառված կանխիկ դրամական միջոցներ և հաշիվներ ՀՅ ԿԲ-ում	2,465,474	962,795
Այլ բանկերում տեղաբաշխված միջոցներ (ծանոթ. 15)	1,808,883	3,324,202
Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,274,357	4,286,997

Թղթակցային հաշիվները ՀՅ ԿԲ-ում ներառում են նաև ՀՀ բանկային օրենսդրության համաձայն ՀՅ ԿԲ-ում տեղաբաշխվող պարտադիր պահուստները, որոնք հաշվարկվում են Բանկի կողմից ներգրաված ՀՅ դրամային որոշ միջոցների 8%-ի և արտարժույթով որոշ միջոցների 12 % -ի չափով Այդ միջոցները 31.12.08թ. դրությամբ կազմում են 633,546 հազար դրամ (31.12.07թ. դրությամբ՝ 547,252 հազար դրամ): Այդ միջոցների ելքագրումն արգելված չէ, սակայն պահուստավորման նվազագույն չափը չպահպանելը հանգեցնում է ՀՅ կենտրոնական բանկի կողմից տույժերի կիրառման: Պարտադիր պահուստավորման միջոցների դիմաց Բանկը տոկոսներ չի ստանում:

15 Պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ

Հազար ՀՅ դրամ	2008	2007
Թղթակցային հաշիվներ	764,961	1,680,574
Ավանդներ բանկերում	1,043,922	1,643,628
Ներառվում է դրամական միջոցների հոսքեր մասին հաշվետվությունում	1,808,883	3,324,202
Վարկեր և ավանդներ	846,673	115,411
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	-	558,630
Այլ հաշիվներ	216,174	5,107,690
	1,062,847	5,781,731
Ընդամենը պահանջներ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	2,871,730	9,105,933

Վարկեր ու ավանդներ հողվածում ներառված 31.12.08թ. դրությամբ 85,620 հազ. դրամ (2007թ.՝ դրությամբ՝ 37,981 հազար դրամ) գումարը հանդիսանում է երաշխիքային գումարներ միջազգային շուկաներում առևտրային գործարքների համար: 31.12.07թ. դրությամբ՝ 21,295 հազ. դրամը՝ որպես ապահովություն տրամադրված բանկային երաշխիքի համար:

31.12.08թ. դրությամբ 1,043,921 հազ. դրամ գումարը կամ թղթակցային հաշիվների և միջբանկային ավանդների 58%-ը կենտրոնացված է մեկ բանկում (2007թ.՝ 3,220,894 հազար դրամ, կամ 97%-ը):

Այլ հաշիվները ներկայացնում են ռեզիլիենտ Բանկի հետ կնքված թվով 1 արտարժույթով կարճաժամկետ ավանդի պայմանագիր, որի դիմաց այլ արտարժույթով միաժամանակ ստացված կարճաժամկետ ավանդը ներառված է 21 ծանոթագրությունում: Այս հաշիվները ներառում են նաև նշված ավանդի գծով հաշվեգրված տոկոսները 83 հազար դրամ գումարով (2007թ.՝ թվով 24 պայմանագրերով տարբեր արտարժույթներով, հաշվեգրված տոկոսները՝ 4,207 հազար դրամ):

31.12.07թ. դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2008		2007	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ ֆինանս. և էկոնոմիկայի նախարարության կողմից բողոքված արժեթղթեր	-	-	559,490	558,630
Ընդամենը հետգնման պայմանագրերով գնված արժեքը	-	-	559,490	558,630

Տեղեկատվությունը փոխկապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 28 ծանոթագրությունում:

16 Հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ

Հազար ՀՀ դրամ	2008		2007	
	Վարկեր			
Վարկեր	6,507,987		3,360,069	
Ֆակտորինգ	422,513		137,293	
Հակադարձ ռեպո համաձայնագրեր	-		369,779	
Այլ գումարներ	323,566		677,363	
	7,254,066		4,544,504	
Արժեգրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(97,208)		(34,705)	
Ընդամենը հաճախորդներին տրված վարկեր և փոխատվություններ	7,156,858		4,509,799	

31.12.08թ. դրությամբ հաճախորդներին տրված վարկերում և փոխատվություններում ներառված հաշվեգրված տոկոսային եկամուտը կազմում է 64,007 հազար դրամ (2007թ.՝ 30,138 հազար դրամ):

31.12.08թ. դրությամբ Բանկի համախառն վարկային պորտֆելի 47%-ը՝ 3,415,760 հազար դրամ ընդհանուր գումարով, տրամադրված է թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց (2007թ.՝ 2,518,385 հազար դրամ կամ 55%՝ տրամադրված թվով 10 վարկառուների և նրանց հետ փոխկապակցված անձանց): Նշված վարկերի գծով արժեգրկումից պահուստները կազմում են 61,806 հազար դրամ (2007թ.՝ 25,183 հազար դրամ):

31.12.2008թ. դրությամբ այլ գումարներում ներառված է մինչև մեկ ամիս մարման ժամկետով իրավաբանական անձին տրամադրված 1,055 հազար ԱՄՆ դոլարով պահույ ներառյալ 5,155 հազար դրամ հաշվեգրված տոկոս (2007թ.՝ 2,221 հազար ԱՄՆ դոլարով

Երկու ավանդ, 1,522 հազար դրամ հաշվեգրված տոկոսը (ներառյալ), որի դիմաց ներգրավվել է 350,000 հազար ՀՀ դրամ (2007թ.՝ 708,000 հազար դրամ) (նշված գումարը ներառված է 22 ծանոթագրությունում):

Վարկերի և փոխատվությունների գծով արժեգրկման պահուստի շարժը ըստ դասերի հետևյալն է.

Հազար ՀՀ դրամ	Պետական ձեռնար- կություններ	Մասնավոր ձեռնար- կություններ	Ֆիզիկական անձիք	Անհատ ձեռնարկատերեր	2008 Ընդամենը
2008թ. Յունվարի 1 դրությամբ	-	23,798	8,834	2,073	34,705
Տարվա ծախս	-	26,974	20,762	2,653	50,389
Դուրս գրում	-	(1,562)	-	-	(1,562)
Վերադարձ	-	13,676	-	-	13,676
2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<hr/> <hr/>	<hr/> <hr/> 62,886	<hr/> <hr/> 29,596	<hr/> <hr/> 4,726	<hr/> <hr/> 97,208
Խմբային արժեգրկում	<hr/> <hr/>	<hr/> <hr/> 62,886	<hr/> <hr/> 29,596	<hr/> <hr/> 4,726	<hr/> <hr/> 97,208
Հազար ՀՀ դրամ	Պետական ձեռնար- կություններ	Մասնավոր ձեռնար- կություններ	Ֆիզիկական անձիք	Անհատ ձեռնարկատերեր	Ընդամենը
2007թ. Յունվարի 1 դրությամբ	70	21,063	4,069	-	25,202
Տարվա ծախս/ (հակադարձում)	(70)	(15,561)	4,765	2,073	(8,793)
Վերադարձ	-	18,296	-	-	18,296
2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<hr/> <hr/>	<hr/> <hr/> 23,798	<hr/> <hr/> 8,834	<hr/> <hr/> 2,073	<hr/> <hr/> 34,705
Խմբային արժեգրկում	<hr/> <hr/>	<hr/> <hr/> 23,798	<hr/> <hr/> 8,834	<hr/> <hr/> 2,073	<hr/> <hr/> 34,705

Տրամադրված վարկերի և փոխատվությունների վերլուծությունն ըստ հաճախորդների ունի հետևյալ տեսքը.

Հազար ՀՀ դրամ	2008	2007
Մասնավոր ձեռնարկություններ	4,749,923	3,055,658
Ֆիզիկական անձիք	2,105,121	1,251,423
Անհատ ձեռնարկատերեր	335,015	207,285
Հաշվեգրված տոկոսներ	64,007	30,138
	<hr/> <hr/> 7,254,066	<hr/> <hr/> 4,544,504
Արժեգրկումից պահուստներ վարկերի և փոխատվությունների գծով	(97,208)	(34,705)
Ընդամենը վարկեր և փոխատվություններ	<hr/> <hr/> 7,156,858	<hr/> <hr/> 4,509,799

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերը ներկայացվում են ստորև.

Հազար ՀՀ դրամ	2008	2007
Հիփոթեքային	995,121	415,593
Սպառողական	70,037	43,756
Ավտոմեքենաների ձեռքբերման	33,542	-
Այլ	1,006,421	792,074
Ընդամենը ֆիզիկական անձանց տրամադրված վարկեր (համախառն)	2,105,121	1,251,423

31.12.07թ. դրությամբ հակադարձ ռեալ համաձայնագրերով գնված արժեթղթերի իրական արժեքը և տրամադրված վարկերի հաշվեկշռային արժեքը ներկայացվում է ստորև.

Հազար ՀՀ դրամ	2008		2007	
	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը	Գրավի իրական արժեքը	Վարկի գումարը
ՀՀ ֆիմանսների նախարարության կողմից թողարկված արժեթղթեր	-	-	348,525	369,779
Ընդամենը գնված արժեթղթեր և հետգննան պայմանագրերով տրամադրված վարկեր	-	-	348,525	369,779

2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ գրավ ընդունված արժեթղթերից ընդամենը 162,016 հազար դրամ գումարով արժեթղթեր վերագրավադրվել են կամ փոխ են տրվել երրորդ անձնանց, փոխանցմանը հաջորդող 3 ամիսը չգերազանցող ժամկետով:

Վարկերի և փոխատվությունների գնահատված իրական արժեքը մոտ է դրանց իրական արժեքին (տես ծանոթ 29):

Վարկային պորտֆելին ներհատուկ վարկային, արժութային, իրացվելիության և տոկոսային ռիսկը բացահայտված է 31 ծանոթագրությունում: Տեղեկատվությունը փոխապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 28 ծանոթագրությունում:

17 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

Հազար ՀՀ դրամ	2008	2007
Գնաճշվող ներդրումներ		
Բաժնեմասային արժեքներ	11,389	4,538
Այլ երկրների պետական պարտատոմսեր	26,608	44,773
	37,997	49,311
Զգնաճշվող ներդրումներ		
ՀՀ կազմակերպությունների բաժնետոմսեր	19,575	19,575
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեքներ	1,580,183	2,081,097
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեքներ	-	27,939
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	775,656	376,705
	2,375,414	2,505,316
Ընդամենը ներդրումներ	2,413,411	2,554,627

Բոլոր պարտքային արժեքները ունեն հաստատուն տոկոսներ:

Զգնաճշվող վաճառքի համար մատչելի պարտքային արժեքները չափվում են իրական արժեքով, օգտագործելով գնահատման տեխնիկա՝ հիմնված տվյալ պահին գործող շուկայական տոկոսադրույթների վրա:

Վաճառքի համար մատչելի արժեքներն ըստ արդյունավետ տոկոսադրույթների և ժամկետների ներառում են:

	2008		2007	
	%	Ժամկետ	%	Ժամկետ
ՀՀ ֆինանսների նախարարության կողմից թողարկված արժեքներ	8.62-10.53	2009-2028	6.50-8.15	2008-2020
ՀՀ ԿԲ կողմից թողարկված արժեքներ	-	-	6.50	2008
ՀՀ ոչ պետական պարտատոմսեր	10.5-11	2009-2011	6.50-6.31	2008-2009
Այլ երկրների պետական պարտատոմսեր	8.25	2010	8.25	2010

Վաճառքի համար մատչելի պարտքային արժեքները՝ ՀՀ պետական պարտատոմսեր 7,979,149 հազար դրամ իրական արժեքով (2007թ.՝ 3,667,165 հազար դրամ) և ՀՀ ոչ պետական պարտատոմսեր 76,182 հազար դրամ իրական արժեքով (2007թ.-ին չի եղել) վաճառվել են երրորդ անգամ ունակ համաձայնագրերով՝ 1 ամիսը շգերազանցող ժամանակահատվածներով: Դրանք վերադասակարգվել են որպես հետզնման պայմանագրերով գրավադրված արժեքներ հաշվապահական հաշվեկշռում՝ առանձին տողում (ծանոթ. 25):

31 դեկտեմբեր 2007թ. դրույթամբ վաճառքի համար մատչելի արժեքները՝ 623,235 հազար դրամ գումարով գրավադրվել էին այլ բանկից ստացված ժամկետային ավանդի դիմաց (ծանոթ. 21):

18 Հիմնական միջոցներ

Կապիտալ ներդրումներ իհմնական միջոցներու մ	Դամակարգչայի ն տեխնիկա և կապի միջոցներ	Փոխադրա- միջոցներ	Գրասենյակայի ն սարքավորում	Ընդամենը
ՍԿՐՄԱԿԱՆ ԱՐԺԵՔ				
Սկզբնական արժեք 2007թ. հունվարի 1 դրությամբ	-	54,987	22,071	15,308
Ավելացում	-	11,831	-	5,185
Օտարում	-	-	-	(60)
2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	66,818	22,071	20,433
Ավելացում	245,000	10,326	-	1,899
Օտարում	-	(244)	-	(47)
2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	245,000	76,900	22,071	22,285
ԿՈՒՏԱԿՎԱԾ ՍԱՆԿԱԾՈՒԹՅՈՒՆ				
2007թ. հունվարի 01-ի դրությամբ	-	19,564	4,120	4,899
Դատկացումներ	-	14,576	4,453	3,711
Օտարում	-	-	-	(39)
2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	34,140	8,573	8,571
Դատկացումներ	-	16,748	4,421	4,106
Օտարում	-	(182)	-	(13)
2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	50,706	12,994	12,664
ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔ				
2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	245,000	26,194	9,077	9,621
2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	32,678	13,498	11,862
Ամրողությամբ մաշված ակտիվներ				
31 դեկտեմբեր 2008թ. դրությամբ իհմնական միջոցների ցանկում ներառված ամրողությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 25,810 հազար դրամ (2007թ.՝ 1,510 հազար դրամ):				
Պարտավորություններ կապիտալ ներդրումների քույլ				
31 դեկտեմբեր 2008թ. դրությամբ Բանկի պարտավորությունները Բանկի նոր շեմի կապիտալ շինարարության գծով կազմում է 238,630 հազար դրամ: Այն նախատեսվում է ավարտել 2009 թ-ի մայիս ամսին:				
Ներդրման փուլում տնկող իհմնական միջոցներ				
31 դեկտեմբեր 2008թ. դրությամբ իհմնական միջոցների ցանկում ներառված փուլում գտնվող իհմնական միջոցների գումարը կազմում է 1,851 հազար դրամ (2007թ.՝ 3,791 հազար դրամ): Տվյալ սարքավորումները չեն ամորտիզացվում և դասակարգված են համաձայն իրենց դասերի:				

Ամրողությամբ մաշված ակտիվներ

31 դեկտեմբեր 2008թ. դրությամբ իհմնական միջոցների ցանկում ներառված ամրողությամբ մաշված ակտիվների սկզբնական արժեքը կազմում է 25,810 հազար դրամ (2007թ.՝ 1,510 հազար դրամ):

Պարտավորություններ կապիտալ ներդրումների քույլ

31 դեկտեմբեր 2008թ. դրությամբ իհմնական միջոցների ցանկում ներառված կապիտալ շինարարության գծով կազմում է 238,630 հազար դրամ: Այն նախատեսվում է ավարտել 2009 թ-ի մայիս ամսին:

Ներդրման փուլում տնկող իհմնական միջոցներ

31 դեկտեմբեր 2008թ. դրությամբ իհմնական միջոցների ցանկում ներառված փուլում գտնվող իհմնական միջոցների գումարը կազմում է 1,851 հազար դրամ (2007թ.՝ 3,791 հազար դրամ): Տվյալ սարքավորումները չեն ամորտիզացվում և դասակարգված են համաձայն իրենց դասերի:

19 Ոչ նյութական ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	Արտոնագրեր	Նամակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք 2007թ. հունվարի 01 դրությամբ	529	29,282	29,811
Ավելացում	-	3,991	3,991
Արժեզրկում	(529)	-	(529)
2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	33,273	33,273
Ավելացում	-	25,388	25,388
2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	58,661	58,661
ԱՄՈՐՏԻԶԱՅԻԱ			
2007թ. հունվարի 01 –ի դրությամբ	529	3,850	4,379
Մասհանումներ	-	3,314	3,314
Արժեզրկում	(529)	-	(529)
2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	7,164	7,164
Մասհանումներ	-	3,732	3,732
2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	10,896	10,896
ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԱՐԺԵՔ			
2008թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	47,765	47,765
2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	26,109	26,109

20 Այլ ակտիվներ

Հազար ՀՀ դրամ	2008	2007
Կանխավճարներ և այլ դեբիտորներ	61,761	2,702
Կանխավճարներ այլ հարկերի գծով	1,057	1,574
Պահեստ	1,647	1,206
Այլ	4,500	4,500
Ընդամենը այլ ակտիվներ	68,965	9,982

**21 Պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների
նկատմամբ**

Հազար ՀՀ դրամ	2008	2007
ՀՀ ԿԲ հաշվներ (ռեպո համաձայնագրեր, վարկեր)	8,648,165	2,321,899
Այլ բանկերի թղթակցային հաշվներ	5,566	151,688
Այլ ֆինանսական կազմակերպությունների ընթացիկ հաշվներ	9,955	6,720
Ավանդներ բանկերից	200,088	620,548
Վարկեր ռեպո համաձայնագրերով	-	1,515,115
Այլ պարտավորություններ	217,500	5,156,691
Ընդամենը պարտավորություններ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	9,081,274	9,772,661

ՀՀ ԿԲ-ի նկատմամբ պարտավորությունները ներառում են վարկեր 600,037 հազար դրամ գումարով՝ ստացված «Գերմանա-Հայկական հիմնադրամ»-ի «Վերականգնվող Էներգիայի զարգացում» վարկային ծրագրի շրջանակներում (2007թ.՝ 169,826 հազար դրամ) և ռեպո համաձայնագրերով վարկեր՝ 8,048,128 հազար դրամ գումարով (2007թ.՝ 2,152,073 հազար դրամ):

Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից բոլոր ավանդներն ունեն հաստատուն տոկոսադրույթներ:

31 դեկտեմբեր 2007թ. դրությամբ Բանկը ուղղի ուղղենատ քանի 775,000 ԱՄՆ դոլարի և 850,000 Եվրոյի չափով ներգրաված ավանդների դիմաց գրավադրել է վաճառքի համար մատչելի արժեքներ 623,235 հազար դրամ գումարով (Ծանոթ. 17):

2008թ. ընթացքում Բանկը այլ քանի երին և ֆինանսական կազմակերպություններին տրամադրել և միաժամանակ նրանցից ստացել է կարճաժամկետ ավանդներ տարբեր արժույթներով: Նշված գումարները ներառված են այլ պարտավորություններ հոդվածում: Տես ծանոթ. 15:

Հաշվետու ժամականաշրջանում Բանկը ներգրաված վարկերի գծով չի ունեցել մայր գումարի, տոկոսների չվճարումներ կամ այլ խախտումներ (2007թ. նույնպես):

22 Պարտավորությունների հաճախորդների նկատմամբ

Հազար ԴՀ դրամ	2008	2007
Իրավաբանական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	1,174,556	2,541,034
Ժամկետային ավանդներ	5,359,949	2,352,386
Այլ պարտավորություններ	350,000	708,000
	6,884,505	5,601,420
Ֆիզիկական անձինք		
Ընթացիկ/հաշվարկային հաշիվներ	454,572	157,828
Ժամկետային ավանդներ	1,505,863	1,210,099
	1,960,435	1,367,927
Ընդամենը պարտավորությունների հաճախորդների նկատմամբ	8,844,940	6,969,347

Ավաղները ունեն հաստատուն տոկոսադրույթներ:

31 դեկտեմբեր 2008թ. դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձանց միջոցներում ներառված են ավանդներ, որոնք հանդիսանում են ապահովածություն տրամադրված վարկերի և երաշխիքների գծով 199,514 հազար դրամ գումարով (2007թ.՝ 135,757 հազար դրամ): Այդ ավանդների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

31 դեկտեմբեր 2008թ. դրությամբ Բանկի հաճախորդների նկատմամբ պարտավորությունների 65 %-ը (2007թ.՝ 64%-ը) 5,734,239 հազար դրամ գումարով (2007թ.՝ 4,432,095 հազար դրամ) հանդիսանում են առաջին երեք խոշոր (2007թ.՝ չորս) հաճախորդների միջոցները: Տեղեկատվությունը փոխկապակցված անձանց վերաբերյալ բացահայտված է 28 ժամորագրությունում:

31.12.08թ-ի դրությամբ այլ պարտավորությունները իրենից ներկայացնում է իրավաբանական անձից ներգրավված 350,000 հազար ՀՀ դրամը (2007թ. 708,000 հազար դրամ), որի դիմաց տրամադրվել է 1,038 հազար ԱՄՆ դոլարով ավանդներ (2007թ. 2,221 հազար ԱՄՆ դոլար) (նշված գումարը ներառված է 16 ծանոթագրությունում):

23 Առևտրային պարտավորություններ

